4 ՅՈՒԼԻՍ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 113(5196)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

## Զինվորական հեղաշրջում Եգիպտոսում

**Դեպքերը երեկ թավալգլոր ընթացան Եգիպտոսում: Բանակը իրականացրեց իշխանափոխության իր ծրագիրը, որի մասին կարելի է կարդալ մեր 5-րդ էջում: Ուշ երեկոյան պետական հեռուստատեսությունն արդեն բանակի ձեռքում էր, որտեղից զինվորական ներկայացուցիչները իրարհետեւից հաղորդագրություններ էին կարդում այն մասին, թե բանակը իշխանափոխության իրականացմանն է անցել «ժողովրդին օգնության հասնելու համար»... Ժողովրդավարականորեն երկրի նախագահ ընտրված Մուրսիին արգելված է երկրից դուրս գալ, կառավարությունը կազմալուծված է արդեն, բանակը ստանձնել է երկրում կարգուկանոն հաստատելու, ազգաբնակչության կենսական պայմանները ապահովելու պարտականությունը: Իսկ վերջին հայտարարությունը՝ Մոհամադ Մուրսին այլեւս նախագահ չէ եւ բանակը մոտ ապագայում կկազմակերպի նախագահական նոր ընտրություններ: Լուծարված է խորհրդարանը: Մայրաքաղաք Կահիրեի կենտրոնական «Թահրիր» հրապարակում հավաքված հսկա բազմությունը հրճվանքի մեջ է:**

## Երեք օր Եվրոպայում





Երեկ Ազգային ժողովից աշխատավայր հասնելու ողջ ճանապարհին Հայաստանի քաղաքացիները, որքան էլ զարմանալի, իրենց առօրյա գործին էին, վազում էին այսուայն հոգսի հետեւից կամ բողոքում շոգից, ու նրանցից ոչ մեկը տեղյակ չէր, որ հայոց խորհրդարանում համաեվրոպական միջոցառում է, Հայաստանն էլ այդ միջոցառման համատեքստում Եվրոպայի մասն է՝ գոնե երեկ բացված համաեվրոպական խորհրդաժողովի տեւելիք երեք օրվա ընթացքում: Բայց դե արդեն երեկոյան մեր զբաղված համաքաղաքացիները հեռուստատեսություններով արդեն լայնորեն տեղեկացված կլինեին, թե որքան եվրոպացի են իրենք այս երեք օրը, եւ կարեւորը՝ դա տեղի է ունեցել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի նախագահության շրջանակներում:

Եվ ուրեմն՝ այդ համաեվրոպական համաժողովին, «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները եւ իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում» վերնագրով, մասնակցեցին եւ ելույթ ունեցան Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Շպիլմանը, Եվրախորհրդի՝ Հայաստանում ամենից շատ մեջբերվող Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոն, այլ կարեւոր եվրոպական հյուրեր՝ հատկապես սահմանադրական իրավունքի ոլորտից, որոնք բոլորն իրենց ելույթներում քննարկում էին այդ կարեւոր թեման 32 երկրների եւ միջազգային կառույցների 80 ներկայացուցիչների հետ:

Դին Շպիլմանն իր ելույթում օրենքի գերակայությունը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի չափորոշիչ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու անհրաժեշտությունից խոսեց, նշեց, որ Նախարարների կոմիտեում նախագահելու ընթացքում 15-րդ արձանագրությունը ստորագրելով Հայաստանն արդեն ձեռքբերում է ունեցել (20 երկիր է ստորագրել), մի նոր ձեռքբերում էլ կունենա, եթե ՄԻ եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրությունը ստորագրի: ԵԴ նախագահն ասում էր, որ իշխանությունները սահմանադրական նորմերի պահպանման արդյունավետ համակարգ պետք է ստեղծեն եւ տարբեր օղակներով այս ուղղությամբ համագործակցեն, որպեսզի իշխանության թեւերի հավասարակշռում ապահովվի:

Ջիանի Բուքիքիոն շատ տեսական այս խորհրդաժողովում ինքը եւս տեսականությունից դուրս չէր՝ թե արդի պետությունը ճկուն պետք է լինի, արագ արձագանքի փոփոխություններին, մշակի ճկունության կառավարման մեխանիզմներ, օրենքի խստական կիրառում թույլ չտա հատկապես ՄԻ ոլորտում:

*Տես էջ 2*

**ԼՐՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

## Համացանցը գաղտնալսվում է

**Համացանցում գրանցվելուց առաջ յուրաքանչյուրս պետք է տեղյակ լինի, որ գրանցվելուց հետո մեր տվյալներին տիրապետում է արդեն մեկ ուրիշն էլ: Եվ համացանցում որոշակի գրառումներից պետք է խուսափել, քանի որ գրառումները կարող են տեղեկատվություն տրամադրել ազգային անվտանգության մասին:**

**Բլոգեր Տիգրան Քոչարյանը նշում է՝ կամ պետք է չմտնել համացանց, կամ էլ մտնել՝ ինչ-որ չափով կրթվելուց հետո, այսինքն իմանալ՝ ինչը պետք է գրել, ինչը՝ ոչ: Օրինակ՝ եթե որեւէ զորամասում ծառայող զինվորը համացանցում նշում է, որ այնտեղ հոգեբանական ծանր վիճակ է, ապա գաղտնալսողի կողմից այսպիսի ինֆորմացիան կարող է օգտագործվել: Տիգրան Քոչարյանը մեջբերում է դեպքեր, երբ զինվորը, օրինակ, նկարվել է բարձունքին կանգնած, ու ներքեւում երեւում է ամբողջ զորամասը, եւ նկարը տեղադրվել է Odnoklassniki սոցցանցում: Խուսափելու համար անձնական ինֆորմացիան բացահայտ հրապարակելու հետեւանքներից, դեռ դպրոցական բարձր դասարաններից աշակերտները պետք է կրթվեն այդ ուղղությամբ:**

**Ըստ Տիգրան Քոչարյանի՝ սահմանափակումներ մտցնելիս էլ ասում են, թե խոսքի ազատությունն է սահմանափակվում: Բայց սոցցանցում սահմանափակումը բացահայտ գրառումների, որոնք առնչվում են անձնական տվյալներին ու անվտանգության հարցերին, կապ չունի խոսքի ազատության հետ: «Իսկ պետական պաշտոնյաները կամ լրատվամիջոցները երբեմն այնպիսի ինֆորմացիա են տարածում բանակի մասին, որ պարզապես շշմում ես», հավելում է Տ. Քոչարյանը: Ի դեպ, լրատվամիջոցներն էլ բանակին վերաբերող թեմաները լուսաբանելիս կամ համացանցում լուսանկարներ ու գրառումներ տարածելիս հարկ է իմանալ, որ այդ ամենը հավաքվում է ինֆորմացիոն բազաներում ու կարող է օգտագործվել ի վնաս ազգային անվտանգության:**

**Հայաստանում Facebook սոցիալական ցանցից ամեն օր օգտվում է շուրջ կես միլիոն մարդ, իսկ ընդհանուր բնակչության կեսը գրանցված է սոցցանցերում ու անընդհատ տեղեկատվություն է տարածում: Ըստ տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանի՝ եթե այդ ամբողջ ինֆորմացիան մշակվի մի տեղում, ապա երկրի մասին դա կտրամադրի ավելի շատ տեղեկատվություն, քան կարող ենք պատկերացնել:**

**Շարունակելով վերահսկողության թեման՝ Սամվել Մարտիրոսյանը նշեց, որ կոնկրետ Ազգային անվտանգության ծառայությունն իրավունք չունի ազդելու ինչ-որ մեկի վրա համացանցում ստատուսներ գրելու համար: Նրա կարծիքով՝ ԱԱԾ-ն չպետք է ունենա այնպիսի գործառույթներ, որոնք կվերահսկեն համացանցում գրված քաղաքական ստատուսները:**

**Վերջին հաշվով՝ համացանցից օգտվող ամեն մեկի պատասխանատվությունն է լինել զգույշ իր գրած ու հրապարակած ինֆորմացիայի համար:**

**Ի. Պ.**

## Հրաժարական է տվել Ֆրանսիայի թեմի առաջնորդ Նորվան արք. Զաքարյանը



Երեկ մեզ չհաջողվեց պաշտոնական աղբյուրներից ճշտել լուրը, որն իր ֆեյսբուքյան էջում առաջինը տարածել էր Երեւանի «Փարիզյան սուրճ» հաստատության նախկին տիրուհի Վալերի Աշխեն Գործունյանը: Ըստ վերջինիս տարածած ֆրանսերեն հաղորդագրության, Հայ եկեղեցու Ֆրանսիայի թեմի առաջնորդ Նորվան արք. Զաքարյանը երկուշաբթի օրը Մայր աթոռ Սբ. Էջմիածին է ուղարկել ընթացիկ տարվա ավարտին պաշտոնից հրաժարվելու դիմումը, այնինչ նրա պաշտոնավարման ժամկետը վերջանում է 2014 թ. ավարտին:

Ըստ տիկին Գործունյանի, պաշտոնից հրաժարվելու Սրբազանի որոշումը կապ ունի Նիսի հայ եկեղեցու շուրջը պատահած դեպքերի եւ տեղի հոգեւոր հովիվ Վաչե վարդապետի Ստրասբուրգ տեղափոխման հետեւանքով Մայր աթոռի եւ իր միջեւ առաջացած լարվածության հետ:

Սպասելի է, որ այս եւ հարակից հարցերի մասին Մայր աթոռը այսօր հանդես կգա պաշտոնական հայտարարությամբ:

## Ալվինա Գյուլումյանը՝ ԵԴ-ում Հայաստանի դեմ դիմումների մասին

**Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի ներկայացուցիչ Ալվինա Գյուլումյանի՝ այս պահին Եվրոպական դատարանում չքննված 873 դիմում կա ընդդեմ Հայաստանի Հանրապետության, որից մոտ 500-ը Ադրբեջանի քաղաքացիների դիմումներն են Ղարաբաղյան հակամարտության գոտուց ընդդեմ մեր երկրի: Իսկ Հայաստանի քաղաքացիների դիմումները հիմնականում վերաբերում են արդար դատաքննության իրավունքին, բավարար չպատճառաբանված նախնական կալանքի որոշումներին (վերջիններիս դեպքում ըստ այդ դիմումների հաշվի չեն առնված գործերի առանձնահատկությունները, չի քննարկվել այլ խափանման միջոցի կիրառման հարցը): Կան նաեւ դիմումներ, որոնք վերաբերում են սեփականության օտարման խնդիրներին:**

**Հայաստանից դիմումների՝ ժամանակային առումով երկար քննությունը պայմանավորված է գործերի մեծ քանակով, բացի դրանից՝ գրագրությունը կողմ պետությունների մեջ կարող է ամիսներ տեւել: Ամենալավատեսական սցենարի դեպքում անգամ՝ մեկ տարուց շուտ Եվրոպական դատարանում դիմում չի կարող քննվել, եթե դա ակնհայտ անհիմն դիմում չէ: Առաջնահերթություն է տրվում անձի կյանքի, անձի արժանապատվության դեմ ուղղված գործերի վերաբերյալ խախտումներին, հաշվի է առնվում դիմողի տարիքային եւ առողջական ցենզը:**

**Ա. Գյուլումյանի գնահատականով՝ Հայաստանը տարածաշրջանային առումով ԵԴ-ի մեծաթիվ գործերի մատակարարների թվում չէ:**

**Մ. Խ.**

## Արտասահմանյան պաղպաղակները՝ առանց հայերեն մակնշման

**Ինչպես տեղեկացանք «Իրազեկ եւ պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպությունից, կազմակերպությունն իրականացրել է ուսումնասիրություն նաեւ իրացման ցանցում վաճառվող Հայաստանի Հանրապետություն ներկրված պաղպաղակի շուկայում: Պարզվել է, որ հայրենական արտադրանքից մի քանի անգամ ավելի թանկ գին ունեցող «SNICKERS», «Mars», «Dove», «BOUNTY», «Starburst», «M&Ms», «Maltesers», «Twix», «Celebrations» պաղպաղակները վաճառվում են հիմնականում առանց հայերեն մակնշման: Ստացվում է, որ սպառողը, մի քանի անգամ ավելի թանկ վճարելով, չունի հնարավորություն իմանալու՝ ինչ է օգտագործում եւ հույսը պետք է դնի միայն պաղպաղակների հայտնի անվանումների վրա:**

**Կազմակերպությունը խնդրի մասին տեղեկացրել է նաեւ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը:**

## Վահրամ Ավանեսյան. «100 մլն դրամով ես զուգարանները չէի գնի»

### *Էկոնոմիկայի նախարարը անդրադարձավ Վերահսկիչ պալատի «վերլուծություններին»*



**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Էկոնոմիկայի նախարար **Վահրամ Ավանեսյանը**, երեկ անդրադառնալով Վերահսկիչ պալատի (ՎՊ), իր բնորոշմամբ, վերլուծություններին, նախարարության տեսակետը հայտնեց 4 հարցերի վերաբերյալ:

Առաջին հարցը հանրային 2 բիոզուգարաններին էր վերաբերվում: Ըստ էկոնոմիկայի նախարարի՝ Վերահսկիչ պալատն այդ ծախսն անարդյունավետ է գնահատել, նշելով, որ դրանք չեն աշխատում: Սակայն, նախարարի տեղեկացմամբ, 2-ն էլ աշխատում են: Այն հարցին, թե արդյո՞ք այդ զուգարանները եկամուտ են բերում, Վահրամ Ավանեսյանը պատասխանեց, որ հանրային զուգարանները չեն տեղադրվում եկամուտներ ստանալու համար:

*Տես էջ 2*

# Դավիթ Սարգսյան. «700 մլրդ դրամի պետական գնումներ ուղղակի չկան»

## *Ըստ ֆինանսների նախարարի` խոսքը մի քանի հարյուր միլիոն դրամի չարաշահումների մասին կարող է լինել*



**Ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը կառավարությունում երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հիմնականում խոսեց գնումների ոլորտում կատարված փոփոխությունների մասին: Նա տեղեկացրեց, որ գնումներն ավելի թափանցիկ եւ օպտիմալ դարձնելու համար հրավերների եւ հայտարարությունների օրինակելի ձեւեր են մշակվել: Նախկինում դրանք տարբեր էին, ինչը կարող էր կոռուպցիոն ռիսկեր առաջացնել: Երկրորդը` գնումների վիճակագրությունը տեղադրվել է gnumner.am կայքում: Մասնավորապես, 2012-ի գնումների հաշվետվությունն արդեն տեղադրված է: Բացի դրանից, ցանկացած գնման գործընթացի մասին հաշվետվությունը նույնպես կարելի է գտնել այդ կայքում, ներառյալ այն տվյալները, թե որքա՞ն է կազմել նվազագույն գինը, ո՞ր ընկերությունն է առաջարկել, ո՞վ է հաղթել եւ այլն:**

**Հաջորդը գնումների վերաբերյալ միասնական տեղեկատվական բազայի ստեղծումն է, որտեղ տեղադրված է բոլոր գնումների մասին տեղեկատվությունը: Նախարարը նշեց, որ ամսական մի քանի հազար գնումներն ամբողջությամբ ուսումնասիրել հնարավոր չէ, բայց ընտրանքային վերլուծություններ արվելու են: Մյուս փոփոխությունն այն է, որ գնումների աջակցության կենտրոնը ուսումնասիրություն է իրականացնելու ոչ միայն գնումների վերջնական փուլի վերաբերյալ, այլեւ սկզբնական, պարզելու համար, թե կա՞, օրինակ, խտրական մոտեցում որեւէ կազմակերպության նկատմամբ, գնային ի՞նչ խնդիրներ են առաջանում եւ այլն:**

**Մեկ այլ որոշմամբ էլ գնումների մրցույթներին մասնակցած այն կազմակերպությունները, որոնք դժգոհում էին դրանց արդյունքներից եւ բողոքարկում, այլեւս չեն կարող իրենց բողոքը հետ վերցնել, ինչպես դա պատահում էր: Այժմ բողոքարկման ենթակա գործը մինչեւ վերջ ուսումնասիրվելու է: Դա նշանակում է ստեղծել այնպիսի միջավայր, որ մարդիկ ավելի համարձակ բողոքեն իրենց իրավունքները խախտելու դեպքում: Դավիթ Սարգսյանը տեղեկացրեց, որ այս տարվա ընթացքում արդեն ստացվել են 36 բողոք, անցյալ ամբողջ տարվա 38-ի փոխարեն:**

**Գնումների էլեկտրոնային համակարգի վերաբերյալ էլ ֆինանսների նախարարն ասաց, որ թեեւ գործում է, բայց ունի խնդիրներ: Արդեն տրված է տեխնիկական առաջադրանք այդ խնդիրները կարգավորելու համար:**

**Հարցին, թե ի՞նչ կարծիքի է ՎՊ նախագահի արտահայտության վերաբերյալ, որ պետական բյուջեի 700 մլրդ դրամը վատնվում է, Դավիթ Սարգսյանը պատասխանեց, որ համաձայն չէ այդ մտքին առաջին հերթին այն պատճառով, որ պետական գնումներն ուղղակի այդքանի չեն հասնում: Պետական բյուջեի միջոցներից պետական գնումները կազմում են 262 մլրդ դրամ, որին ավելացրած միջազգային կառույցներից ստացված գնումները կկազմեն 445 մլրդ դրամ: Ֆինանսների նախարարի ներկայացմամբ, այդ գումարից պետք է հանել 132 մլրդ դրամ ուսուցիչների եւ պոլիկլինիկաների աշխատողների աշխատավարձերը, որոնք ֆինանսավորվում են այս տողով, ապա ընդհանուր առմամբ գնումների ծավալները կազմում են մոտ 313 մլրդ մլրդ դրամ: Ընդգծելով, որ գնումների համակարգում կան խնդիրներ, ֆինանսների նախարարն ասաց, որ դրանք այնուամենայնիվ համակարգային չեն, եւ չի կարող խոսք լինել դրանց 10 կամ անգամ 5 տոկոսի վատնելու մասին: Ըստ Դավիթ Սարգսյանի` խոսք կարող է լինել մի քանի հարյուր միլիոն դրամ չարաշահումների մասին: Ըստ որում, նա նշեց, որ ֆինանսների նախարարության հայտնաբերած եւ Վերահսկիչ պալատի հայտնաբերած խախտումների գումարների տվյալները մոտ են միմյանց:**

**2008-ին ֆինանսների նախարարությունը հայտնաբերել էր 7,2 մլրդ դրամի խախտումներ, ՎՊ-ն` 8 մլրդ դրամի, 2009-ին նախարարությունը` 5,3 մլրդ դրամի, ՎՊ-ն` 7,5 մլրդ դրամի, 2012-ին ֆինանսների նախարարությունը` 2,2 մլրդ դրամի, ՎՊ-ն 1,3 մլրդ դրամի: Նախարարը առանձնացրեց 2011-ը, երբ սոցիալական ապահովության ոլորտում 11 մլրդ դրամի չարաշահումներ բացահայտվեցին: Նա տեղեկացրեց, որ չարաշահումների դեպքերի վերաբերյալ 19 գործ է ուղարկվել իրավապահ մարմիններին, իսկ միայն 2011-ին` 51 գործ:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

# Երեք օր Եվրոպայում

*1-ին էջից*

Եվ առհասարակ` օրենսդրությունն անընդհատ փոփոխելու կարիք կա` հանրային կյանքին, մարդու իրավունքներին ուղղված մարտահրավերներով պայմանավորված. սահմանադրական երաշխիքները, ըստ եվրոչափորիչների, յուրաքանչյուր պետության առաջնային պարտականությունն է:

Նույնքան կարեւոր ելույթներ ունեցան մերոնք: Մեր խորհրդարանի ղեկավար **Հովիկ Աբրահամյանը** առավոտյան խորհրդաժողովը բացելիս այն խորհրդանշական էր համարել ոչ միայն Նախարարների կոմիտեում Հայաստանի նախագահելու, այլեւ Հայաստանի հավատարմությունը եվրոպական արժեքներին հավաստելու եւ եվրոպական մեծ ընտանիքին ինտեգրվելու առումով: Հետն էլ եվրոպացիներին հիշեցրել էր Հայաստանում սահմանադրական սկզբունքները կյանքին համադրելու դարավոր, դեռ Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառացի» ժամանակներից եկող ավանդույթները` խորհրդաժողովի թեման այժմեական համարելով ԵԽ անդամ շատ պետությունների համար:

Մեր արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանն** իր ելույթում Նախարարների կոմիտեում Հայաստանի նախագահելը հավելյալ հնարավորություն համարեց մեր երկրի համար` ժողովրդավարացման զարգացմանն ուղղված ԵԽ անդամ երկրների միասնական ջանքերին իր ներդրումը բերելու առումով: Նալբանդյանն ասում էր, որ կազմակերպության գործունեության արդյունավետությունն ու նրա վստահելիությունը մեծապես կախված են այն հանգամանքից, թե որքանով անդամ երկրները միասնաբար եւ յուրաքանչյուրն անհատապես հավատարիմ կմնան ժողովրդավարությանը, իրավունքի գերակայությանը եւ մարդու իրավունքներն ամրապնդելու եւ առաջ տանելու իրենց հանձնառությանը:

Էդվարդ Նալբանդյանի գնահատմամբ` խորհրդաժողովի աշխատանքները կարող են նպաստել օրենքի եւ դրա կիրառելիության կատարելագործմանը եվրոպական աշխարհամասում եւ այս գործընթացում իրենց ներդրումը կարող են բերել ինչպես Նախարարների կոմիտեն եւ Խորհրդարանական վեհաժողովը, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ու Վենետիկի հանձնաժողովը:

Իսկ մեր երկրի նախագահի ուղերձը խորհրդաժողովի մասնակիցներին էր բերել նրա աշխատակազմի ղեկավար **Վիգեն Սարգսյանը**. «Մեր երկրի ու իշխանությունների համար մեծ պատիվ ու պատասխանատվություն է նախագահել Եվրոպայի խորհրդում: Այս վեցամսյա ժամանակահատվածը մենք ձգտելու ենք արժեւորել այնպիսի նախաձեռնություններով, որոնք նոր խթան կդառնան եվրոպական արժեքային համակարգի հետագա զարգացման ու ամրապնդման, իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ իրագործման համար», իր խոսքն էր ուղղել երկրի նախագահը` մարդու իրավունքը անկյունաքարային արժեք եւ գերակայություն համարող եվրոպական մոտեցումը միջազգային հարաբերությունների հետագա ծավալման տեսակետից կարեւորելով, «դրանց հիմքում դնելով արժեքային հստակ կողմնորոշիչ, որի համաձայն մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեք են»: «Համոզված եմ, որ ժողովրդավարական բոլոր երկրներում սահմանադրական մակարդակում այս կամ այլ կերպ ամրագրված է իրավունքի գերակայության սկզբունքի էությունը: Սակայն գլխավոր խնդիրն այն կյանքի կոչելն է, իրավունքով իշխանության սահմանափակումը կյանքի կանոն դարձնելը», հղել էր նախագահը:

Դե իսկ մեր Սահմանադրական դատարանի նախագահ **Գագիկ Հարությունյանը** «Իրավունքի գերակայության տեղն ու դերը մարդու եւ քաղաքացու սոցիալական վարքագծում» թեմայով մի այնպիսի ելույթ ունեցավ, որ եվրոպացի նախագահողները դա լսում էին հատկապես ականջներին օղ անելով` երբ մենք «Դատաստանագիրք» ու Մխիթար Գոշ ենք ունեցել, եվրոպաներն ուր էին: Պետությանն էլ (արդի պետություններին) ՄԻ պաշտպանության ոլորտում ազգային եւ միջազգային պարտավորությունները հետեւողական իրացնել կոչեց:

Մ. Խ.

# Արմեն Աշոտյան. «Թալան, կողոպուտ, լափել բառերը չկան ՎՊ հաշվետվության մեջ»

Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը ՎՊ եզրակացությունների մի մասին համաձայն է, մյուս մասի վերաբերյալ առարկություններ ուներ: Երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ Արմեն Աշոտյանը նշեց, որ իր ղեկավարած ոլորտում չարաշահումների եւ յուրացումների մասին խոսելը տեղին չէր, հատկապես երբ ՎՊ-ն եւս ընդգծել է էական տեղաշարժերը նախորդ հաշվետվությունից հետո: «Ունենք առարկություններ զեկույցի հետ կապված, որոնք ներկայացված են եղել անմիջապես զեկույցը ստանալուց հետո: Արձանագրված խնդիրները կարելի է դիտարկել` ֆինանսական, վարչարարական, մեթոդաբանական: Բոլոր դեպքերում, խոսել ոլորտում հափշտակումների մասին տեղին չէր», նշեց նա:

Բյուջեն թալանելու մասին Հովիկ Աբրահամյանի ելույթի մասին հարցին պատասխանելով` նախարարն ասաց, որ ինքը չի մեկնաբանում քաղաքական գործիչների կարծիքները: Շարունակելով` նա ակնհայտ համարեց, որ բյուջեն թալանված չէ: «Թալան, կողոպուտ, լափել բառերը դուք չեք գտնի ՎՊ հաշվետվության մեջ», նշեց Արմեն Աշոտյանը:

Ա. Մ.

# Վահրամ Ավանեսյան. «100 մլն դրամով ես զուգարանները չէի գնի»

*1-ին էջից*

«**Ազգի**» հարցին, թե որքանո՞վ է նպատակահարմար 100 մլն դրամ ծախսել 2 հանրային որ զուգարանի ձեռքբերման համար, էկոնոմիկայի նախարարն ասաց, զուգարանները պետք է լինեն լավագույնները, այդպիսի զուգարաններ կան բոլոր տուրիստական վայրերում, եւ դրանք նպաստում են զբոսաշրջիկների թվի ավելացմանը: Այդուհանդերձ, Վահրամ Ավանեսյանն ընդունեց, որ այդ գնով զուգարանները նպատակահարմար չէր գնելը, ասելով. «Ես 100 մլն դրամով զուգարանները չէի գնի»:

ՎՊ երկրորդ դիտողությունը զբոսաշրջության ոլորտում նախարարության կողմից ստուգումներ չիրականացնելու մասին էր: Էկոնոմիկայի նախարարի խոսքերով, այժմ գնում են ռիսկերի վրա հիմնված ստուգումներ իրականացնելուն, եւ այդ հարցում պետք է լինել զգույշ` տնտեսվարողներին չվնասելու համար:

Սկսնակ բիզնեսին վարկեր տրամադրելու մասին, որոնց մի մասը հետագայում փակվել է, Վահրամ Ավանեսյանի բնորոշմամբ, շատ զարմանալի կլիներ, եթե բոլորն էլ շարունակեին գործել, քանի որ այնտեղ, որտեղ ներդրումներ են կատարվում, 20-30 տոկոսն է կայանում: Հնարավոր չէ նաեւ առաջին տարում ունենալ 40-60 տոկոս շահութաբերություն: «**Ազգի**» հարցին, թե մինչ վարկեր տրամադրելը պետությունը նկատի չի՞ առնում այդ սուբյեկտների ռիսկայնությունը, էկոնոմիկայի նախարարը պատասխանեց, որ հաշվի են առնվում, բայց որպես կանոն մասնավոր բիզնեսում ստեղծված ընկերությունների 80 տոկոսը առաջին տարվանից հետո չի շարունակում գործել: Նրա գնահատմամբ, պետք է այլ չափանիշներով առաջ շարժվել, թե որքան գումար է ներդրվել եւ որքան աշխատատեղ ստեղծվել: Նախարարը տեղեկացրեց, որ սկսնակ բիզնեսին վարկավորելու ծրագրով 600-700 հազար դրամով 1 աշխատատեղ է ստեղծվել: Նա նաեւ տեղեկացրեց, որ այս ծրագիրը շարունակվելու է, եւ ընդգծեց, որ գումարների 85 տոկոսը տրամադրվում է հեռավոր եւ սահմանային գյուղերի սկսնակ գործարարներին:

Գյումրու տեխնոպարկի ծրագիրը նույնպես ՎՊ-ն անարդյունավետ է համարել: Հիմնավորումն այն էր, որ ծրագիրն անորոշ վիճակում է: Ըստ նախարարի` դա այդպես չէ: Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի շինարարությունը շարունակվում է եւ դեկտեմբերին կհանձնվի շահագործման: Այդտեղ պետք է վերապատրաստվեն ՏՏ ոլորտի մասնագետները: Արդեն 300 մասնագետներ վերապատրաստվել են: Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնում ներդրումներ կատարելու ցանկություն են հայտնել «Դը լինկը» եւ այլ ընկերություններ: Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի համար 40-50 մլն դոլար ներդրումներ են կատարվելու եւ ստեղծվելու է 8 հազար աշխատատեղ: Այս դեպքում եւս էկոնոմիկայի նախարարն անհնար համարեց, որ արդեն գործող լաբորատորիաները իրենց գործունեության առաջին տարում շահութաբեր լինեն: Դրանց շահութաբերությունը պետք է գնահատել 4-5 տարի հետո:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անհանդուրժողականություն

Հունիսի 19-ին «Ազգ»-ը հրատարակեց պարսկահայ երեք լրատվամիջոցների՝ «Արաքս» շաբաթաթերթի, «Իրանահայեր» լրատվական ցանցի եւ «Համայնք» լրատվական կայքէջի համատեղ ստորագրած հոդվածը՝ Անթիլիասում հունիսի 12-15-ը Արամ Ա կաթողիկոսի նախագահությամբ կայացած Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության Ազգային ընդհանուր ժողովի առթիվ՝՝ «Ազգային եկեղեցական ժողովի փոխարեն Բեյրութում կրկին կայացավ կուսակցական ժողով» վերնագրով: Վերոհիշյալ լրատվամիջոցները հակիրճ ու կոնկրետ արտահայտել էին իրենց դժգոհությունը այդ ժողովում իրենց թեմի թերի ներկայացվածության եւ օրակարգում ընդգրկված, ավելի շուտ՝ չընդգրկված մի քանի հարցերի շուրջ: Այդ դժգոհությունները կարելի է ամփոփել հետեւյալ կետերի մեջ.

ա- Չորս տարին մեկ գումարվող այդ ժողովին Թեհրանի հայոց թեմն իր կանոնադրութեան համաձայն մասնակցում է 10 հոգով, բայց այս անգամ միայն 8-ն է մասնակցել:

բ- ՀՅԴաշնակցությունը այս անգամ էլ թույլ չի տվել, որ թեհրանահայությանը ներկայացնողների ցանկում ընդգրկվեն նաեւ տեղի ընդդիմության ներկայացուցիչներ, փոխարենը Անթիլիաս է առաքել մեծամասամբ իր կուսակիցներին:

գ- Այդ հանգամանքը դժգոհություն է առաջացրել նույնիսկ կուսակցականների (ի դեպ, Իրանում դեռ 50-ական թթ.-ից ավանդական մեր կուսակցություններից երկուսի գործունեությունը արգելվել է՝ ոչ առանց ՀՅԴ-ի մեղսակցության) շրջանում, որոնցից հինգը մերժել են մեկնել Անթիլիաս, փոխարենն իրենց տեղը զիջել են անձնափոխանորդներին:

դ- Անթիլիաս մեկնածների մեջ է եղել նաեւ երեսփոխան Վարդան Վարդանյանը, որ, հոդվածագրերի պնդմամբ, ընդհանրապես չի եղել ընտրվածների ցուցակում, այլ՝ Լիբանան է մեկնել Արամ Ա կաթողիկոսի հրավերով եւ արդեն տեղում դարձել կամ նշանակվել է Տանն Կիլիկիո կաթողիկոսության Ազգային ընդհանուր ժողովի Կենտրոնական վարչության Քաղաքական ժողովի անդամ, համալրելով 1956 թ.-ի բաժանումից ի վեր ավանդաբար միայն Դաշնակցության կարկառուն ներկայացուցիչներին վերապահված նրա կազմը:

Դժգոհ մնալով այդ՝ իրենց արտահայտությամբ «մենատիրական» գործելակերպից, հոդվածագիրները անդրադարձել էին նաեւ, ինչպես ասվեց, օրակարգային հարցերին, որոնց մեջ, իրենց կարծիքով, ընդգրկված պետք լինեին նաեւ հետեւյալները.

ա- «Ազգի զավակների միջեւ միասնության հիմքեր ստեղծելը եւ միասնություն քարոզելը»:

բ- «Ամենայն հայոց» տիտղոսը որպես միայն Մայր աթոռ Ս. Էջմիածնի գահակալին «աներկբայելի մենաշնորհը» վերահաստատելը:

գ- «Աղանդավորների քայքայիչ գործունեության դեմ պայքարելու» անհրաժեշտությունը:

դ- «Հայ դատը համահայկական եւ վերկուսակցական մտահոգություն հայտարարելը»:

Միով բանիվ, թեհրանահայ երեք լրատվամիջոցները եզրակացրել էին, որ Անթիլիասում գումարված ժողովը ավելի շուտ «ցուցադրական մի հավաք» էր, կուսակցական «որոշակի նպատակ հետապնդող ժողով»:

Ինչպես եւ սպասվում էր, «**Ազգ**»ում տպագրված այդ հոդվածին հունիսի 26-ին պատասխանել է ՀՅԴ Թեհրանի պաշտոնաթերթ «Ալիքը», մեկ ամբողջ էջ տրամադրելով Անթիլիասի ժողովին մասնակցած անձնավորություններին, որոնք մեծ ոգեւորությամբ ներկայացնում են ժողովից եւ այնտեղ տիրող մթնոլորտից ստացած իրենց դրական տպավորությունները, շեշտում օրակարգում արծարծված խնդիրների կարեւորությունը, տիրող համահայկական ոգին եւլն: Դրանով, փաստորեն, «Ալիքը» փորձել է ջրել մեր հոդվածագիրների պնդումները, սակայն առանց անդրադառնալու օրակարգի վերաբերյալ նրանց կարեւոր առաջարկներին: Երկրորդ բաժնով «Ալիքի» խմբագրությունը հարմար է դատել նույն զրուցակիցներին խոսեցնել «**Ազգ**»ի հրատարակած հոդվածի մասին: Բնականաբար, «Ալիքի» 9 զրուցակիցներից 7-ն, ոմանք առանց իսկ ծանոթ լինելու հոդվածին, իրենց զայրույթն են արտահայտել այդ առթիվ: Նրանցից ոմանք չեն զլացել անգամ օգտագործել «անպատասխանատու», «վարկաբեկիչ», «ապակողմնորոշող», «անհեթեթություն» եւ նման որակումներ, սակայն դժբախտաբար առանց անդրադառնալու հոդվածագրերի մատնանշումներին ըստ էության: Միայն նրանցից մեկը՝ պրն Արմեն Հայրապետյանն է պնդել, որ «մեզ հետ միասին ընդդիմադիր ճակատի ներկայացուցիչներ կային», մինչդեռ «Ալիքի» մեկ այլ զրուցակից՝ պրն Վալոդ Հախինյանը նույն էջում հերքում է դա եւ հայտարարում. «Ընդդիմադիր թեւին յարող ոչ մի ներկայացուցիչ չկար: Իմ կարծիքով, անկուսակցականը տարբեր է, բայց ընդդիմադիր կուսակցութեան յարող ոչ ոք չկար: Եթէ կային, այսինքն՝ ես եւ Էլմիսն էլ պարզապէս անկախ թեկնածուներ ենք ՊԺ-ում ու ընտրութիւններում եւ մենք չենք ներկայացնում ընդդիմադիր թեւ»: Այլ խոսքով, ըստ էության տրված միակ կոնկրետ պատասխանը հերքվում է մեկ այլ մասնակցի կողմից:

Շնորհակալ պետք է լինել «Ալիքի» խմբագրությանը, որ զանց չի արել ոչ միայն պրն Հախինյանի խոսքի վերոբերյալ հատվածը, այլեւ մեկ այլ մասնակցի՝ տիկին Էլմիս Մասեհյանի հետեւյալ կարծիքը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Անդրադառնալով շրջանառուած որոշ լրատւութիւններին, որոնք ժողովը կուսակցականացած էին բնութագրել, պիտի յայտնեմ, որ ժողովում արտայայտուած մտքերը եւ խօսքերը վեր էին որեւէ խմբակցական-կուսակցական շրջանակներից եւ համազգային բնոյթ էին կրում: Միւս կողմից, հաւատացած եմ, նման կարծիքներ կանխելու համար՝ թեմիս պատուիրակութեանը մաս պիտի կազմէին համայնքում տարբեր մտածելակերպեր ունեցող անձինք, որպէսզի ամէն կողմ հնարաւորութիւն ունենար իր դիտանկիւնից հարցերը քննելու եւ շինիչ առաջարկներով ու լուծումներով հանդէս գալու, որը, անշուշտ, պիտի նպաստէր մեր համայնքի առաւել միասնականութեանը»:

Կարծում եմ, ամեն ինչ ասված է, ավելացնելու բան չկա: Սակայն արի ու տես, որ «Ալիքի» խմբագրությունն ունի՛ ավելացնելիք, անհանդուրժողականությա՛ն ավելցուկ:

Չբավարարվելով Անթիլիասի ժողովի 8-9 մասնակիցների խոսքերով, մեր պաշտոնակիցը հարկ է համարել մի «զգետնող» հարված հասցնել նաեւ մեր թերթին, քանի որ... տեղ է տվել թեհրանահայ երեք լրատվամիջոցների կարծիքին: «Ու, ինչպես միշտ,- գրում է «Ալիքը»,- լսող ականջն ու դիտող աչքը համայնքում սպառելով՝ նիւթը տպագրում են (երեք լրատվամիջոցները.- Հ.Ա.) իրենց միակ ու անփոխարինելի յենարանը հանդիսացող հայաստանյան յակոբաւետիքեանական (Արմենական-ՌԱԿ նորակոչիկ եւ ուղնուծուծով իշխանութիւնների գրպանը մտած կուսակցապետ) «Ազգ» օրաթերթում, եւ նիւթում աղաւաղելով իրական պատկերները՝ փորձում են նոր ճապաղած գոյն ու երանգ հաղորդել իրենց իսկ յօրինուածքային ջաղացին եւ հեքիաթային ջաղացի յանկարծակի, բայց բնականոն պտոյտի խափանմանը տալիս ապակողմնորոշիչ «ախտորոշում»:

Հարկ չեմ համարում պատասխանել այս մանվածապատ եւ իսկապես ճապաղ շարադրանքին, ոչ էլ կարիք եմ զգում ուղղելու կուսակցական օրգանին անհարիր տգիտության արդյունք սխալները: Բայց չեմ կարող չասել՝ ավելի լավ է լինել հայրենի «իշխանությունների գրպանում», քան զբաղվել գրպանահատությամբ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ



# Հայոց ցեղասպանության ճանաչում. իրանահայերի ակնկալիքը նախագահ Ռոհանիից

Տնտեսական հարցի լուծում, սոցիալական ոլորտի բարելավումներ: Սրանք իրանցի ժողովրդի ակնկալիքներն էին նախագահական ընտրություններից: Հենց դա է պատճառը, որ նախագահի թեկնածուները իրենց ծրագրերում առաջնահերթությունը տալիս էին սոցիալական խնդիրներին:



Իրանի Մեջլիսի հայազգի պատգամավոր **Կարեն Խանլարյանի** մեկնաբանությամբ՝ Իրանում տնտեսական վիճակը շարունակում է մնալ ծայրահեղ վատ, որեւէ առաջընթաց նկատելի չէ: Իրանցի ժողովուրդը նոր, առավել բարեկեցիկ ապագայի հույսերը կապում է նոր կառավարության եւ նախագահի հետ, եւ հենց դա է պատճառը, որ նախագահական ընտրություններին արձանագրվեց 73 տոկոս մասնակցություն: Բնակչության 53 տոկոսն ընտրեց Հասան Ռոհանիին, որը համեմատաբար համարվում է բարեփոխումների կողմնակից քաղաքական գործիչ: Խանլարյանի խոսքերով՝ արտաքին քաղաքականության մեջ սուր եւ անկյունադարձային փոփոխություններ չեն լինի, սակայն, ի տարբերություն իր նախորդի, Ռոհանին առավել մեղմ ու դիվանագիտական հնարքներ կկիրառի Արեւմուտքի հետ բանակցությունների ժամանակ: Այս առնչությամբ արդեն որոշակի քայլեր ձեռնարկվում են. մասնավորապես երկրի դիվանագիտական կորպուսում սպասվում են լուրջ փոփոխություններ եւ կադրերի նորացում:

Նորարարություններին զուգահեռ՝ Ռոհանին կարեւորելու է ազգային շահն, ու դրանք կմնան անփոփոխ: Անփոփոխ կլինի նաեւ Իրանի միջուկային ծրագրի իրականացումը: Թեպետ հենց ուրանի հարստացման ծրագրի պատճառով է, որ Արեւմուտքն Իրանին պատժել է, եւ երկիրը հայտնվել է տնտեսական բլոկադայի մեջ, այնուամենայնիվ, միջուկային ծրագիրը շուրջ 30 տարվա պատմություն ունի, եւ այս նախագահի դիրքորոշումն էլ այդ հարցում կմնա անփոփոխ:

Խանլարյանը հույս ունի, որ գոնե սնունդի հարցում նոր նախագահը եւ դիվանագետները կկարողանան «լեզու գտնել» Արեւմուտքի հետ:

Հայկական համայնքն էլ որոշակի ակնկալիքներ ունի նոր նախագահից: Նախագահական ընտրություններից առաջ հայ համայնքի ներկայացուցիչները հանդիպել են նախագահի թեկնածուների հետ եւ նրանց ներկայացրել համայնքի պահանջները: Հայ համայնքի գլխավոր պահանջը Հայոց ցեղասպանության ճանաչումն է: Նրանք ցանկանում են, որ նախագահը ազգային եւ կրոնական փոքրամասնությունների գծով մասնագետ խորհրդական ունենա, որպեսզի նրա միջոցով կառավարությունը տեղյակ լինի իր երկրի ազգային փոքրամասնությունների խնդիրներին:

Հայազգի պատգամավորը շեշտում է, որ բոլոր թեկնածուները դրական են արտահայտվել եւ նկատի ունեցել հայկական կողմի առաջարկությունները:

Խանլարյանը համոզված է, որ երդմնակալությունից հետո նորընտիր նախագահը կհանդիպի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, այդպես եղել է բոլոր նախորդ նախագահների օրոք: «Այդ ժամանակ առավել մանրամասն կներկայացնենք Հայոց ցեղասպանության հետ կապված մեր առաջարկությունները ու հույս պետք է փայփայենք, որ հաջորդ տարվա ապրիլի 24-ին Ռոհանին գոնե դատապարտող հայտարարությամբ հանդես կգա», ասաց պատգամավորը:

Հ. Հ.

# Անհասկանալի ու տարօրինակ

«**Ազգ**» օրաթերթը նախորդ շաբաթ հոդված էր հրապարակել «Մարտունու զինկոմիսարիատը չի վճարել 8 բուժաշխատողների 2 ամսվա աշխատավարձը» վերնագրով, որտեղ ներկայացրել էինք, որ նախազորակոչայինի ժամանակ բուժաշխատողները հունվար-փետրվար ամիսներին աշխատել են, սակայն աշխատավարձ չեն ստացել:

Մարտունու բժշկական կենտրոնից հոդվածի առնչությամբ նամակ ենք ստացել, որ զինկոմիսարիատն իրավունք չունի վարձատրելու բուժաշխատողների աշխատավարձը: Վճարները կատարում է «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ն: Բժշկական կենտրոնի գլխավոր բժիշկ **Եղիշե Հարեյանի** հետ հեռախոսազրույցից պարզ դարձավ, որ իրենք գումարը ստանում են առողջապահության նախարարությունից: Հետաքրքրականն այն է, որ, ըստ օրենքի եւ պայմանագրի, նրանք վարձատրվում են 8 ամսվա աշխատանքի համար, այսինքն՝ հունվար-փետրվար ամիսներին բժիշկները աշխատում են, սակայն չեն վարձատրվում: Հարեյանի խոսքերով՝ միշտ էլ այդպես է եղել ու երբեւիցէ դժգոհություններ չեն եղել:

Տարեսկզբին Մարտունու զինկոմիսարիատում տեղի է ունեցել ժողով, որի ժամանակ զինկոմը հայտարարել է, որ բժիշկների համար լավ լուր ունի՝ հունվար-փետրվար ամիսների համար էլ են վարձատրվելու: Մեր այս դիտարկմանը Հարեյանն ասաց. «Ով նման հայտարարություն է անում, թող նրանից պահանջեն: Մենք, ըստ օրենքի եւ ըստ սահմանված չափի, բժիշկներին գումար տրամադրում ենք: Ես խաբելու ոչինչ չունեմ»:

Բնականաբար, գլխավոր բժշկին չհավատալու պատճառ չունենք, մանավանդ որ նախորդ հոդվածում էլ որեւէ կերպ իրեն չէր վերագրվում կատարվածը, այլ՝ զինկոմին, ով իրավասու չլինելով հանդերձ հայտարարում է աշխատավարձերի տրամադրման մասին, հետո լռում՝ ստեղծելով տպավորություն, թե քաղաքացիներին խաբել են:

Մյուս կողմից, անհասկանալի է նաեւ առողջապահության նախարարության դիրքորոշումն առ այն, որ բուժաշխատողները պետք է ողջ տարին աշխատեն, սակայն աշխատավարձ տրամադրվի 8 ամսվա համար: Ինչի՞ համար է նման որոշումն ու ինչո՞ւ պետք է բժիշկները չվարձատրվեն այն ամիսների համար, երբ իրոք գործ են կատարում: Սա, մեղմ ասած, տարօրինակ ու անհասկանալի է:

Ինչպես զինվորականներն են փաստում, ինչպես հաճախ նշում է պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, բանակը սկսվում է զորակոչից: Այս առնչությամբ գլխավոր հանգամանքն այն է, որ հիվանդ կամ խնդիրներ ունեցող տղաներին բանակ չտանեն, կամ ուղարկեն համապատասխան ստորաբաժանումներում ծառայելու: Ի վերջո չի կարելի կարճատես կամ սրտից թույլ զինվորին համարել պիտանի եւ ուղարկել առաջին գիծ: Այս առնչությամբ ամբողջ պատասխանատվությունը դրվում է բժիշկների վրա, իսկ նրանք բարեխի՞ղճ կկատարեն իրենց պարտականությունը, երբ, ըստ օրենքի, կատարած աշխատանքի համար չեն վարձատրվելո՞ւ: Մարդկային գործոնն իհարկե շատ կարեւոր է, հայրենասիրությունը՝ նույնպես, սակայն դրանցով ընտանիք չես կարող պահել:

Այս առնչությամբ ակնկալում ենք նաեւ առողջապահության նախարարության պատասխանը:

Հ. Հ.

## Նոր թեկնածու

# Ո՞վ է Իբրահիմբեկովը եւ ինչո՞ւ Իբրահիմբեկովը

***Երեկվա համարում «Ազգը» տեղեկացրեց, որ ադրբեջանական ընդդիմության միասնական թեկնածուն՝ գալիք հոկտեմբերին նախանշված երկրի նախագահական ընտրություններում, լինելու է 74-ամյա Ռուստամ Իբրահիմբեկովը: ռուսական ծառայությանը Իբրահիմբեկովը հարցազրույց է տվել, որտեղ մասնավորապես նշել է. «Ես վախենում եմ ե՛ւ ձերբակալությունից ե՛ւ սպանությունից»:***

### Ո՞վ է Իբրահիմբեկովը

Ռուստամ Մամեդ Իբրահիմ օղլի Իբրահիմբեկովը սովետական-ադրբեջանցի գրող է, դրամատուրգ եւ կինոռեժիսոր, նա ծնվել է Բաքվում, մշակույթի գործիչներ Մեմեդ Իբրահիմ Աիմեդ օղլի Իբրահիմբեկովի եւ Ֆաթիմա Ալեքպեր Մեշադիբեկովայի ընտանիքում: Նա Ադրբեջանական ՍՍՀ-ի, ինչպես նաեւ Ռուսաստանի ՍՍՀ-ի մշակույթի վաստակավոր գործիչ է, պրոֆեսոր: Իբրահիմբեկովը ադրբեջանցի հայտնի գրող Մաքսուդ Իբրահիմբեկովի եղբայրն է: Կինոյի աշխարհում Իբրահիմբեկովին հատկապես նշանավորեց Վալենտին Եժովի հետ համատեղ սցենարիստական աշխատանքը «Անապատի սպիտակ արեւ» ֆիլմում, որը կարճ ժամանակ անց հանրահայտ դարձավ ողջ Միությունում: Ավելի ուշ Իբրահիմբեկովը սկսեց գործակցել ռուս հանրահայտ կինոռեժիսոր Նիկիտա Միխալկովի հետ, մասնավորապես համատեղ նկարահանելով Վենետիկի կինոփառատոնի «Ոսկե առյուծ» մրցանակին արժանացած «Ուռգա. Սիրո տարածք» ֆիլմը, ինչպես նաեւ «Արեւից քշվածները» ֆիլմը, որը արժանացավ ամերիկյան կինոակադեմիայի «Օսկար» մրցանակին՝ որպես լավագույն արտասահմանյան ֆիլմ:

Իբրահիմբեկովը հեղինակել է ավելին քան 40 ֆիլմ, նա Բաքվում բացեց Ադրբեջանում առաջին մանկական կինոդպրոցը, ԱՊՀ եւ Բալթյան երկրների կինեմատոգրաֆիստների միությունների դաշնության նախագահն է, Ադրբեջանի կինեմատոգրաֆիստների միության նախագահը, եվրոպական «Ֆելիքս» կինոակադեմիայի անդամ, ամերիկյան կինոարվեստի ակադեմիայի անդամ եւ Մոսկվայում հրեական կինոփառատոնի կազմկոմիտեի նախագահ:

Իբրահիմբեկովը հեղինակել է 15 պիես, որոնք բեմադրվել են աշխարհի ավելին քան 100 թատրոններում («Կինը փակ դռների հետեւում», «Հուղարկավորություն Կալիֆոռնիայում», «Տունը ավազի վրա», «Առյուծի նմանը», եւ այլն):

Իբրահիմբեկովը բազմաթիվ սովետական, ազգային եւ միջազգային մրցանակների դափնեկիր է, բայց քաղաքականության մեջ նորեկ է: Թերեւս այս հանգամանքը, ինչպես նաեւ Իբրահիմբեկովի հանրահայտ լինելն է նպաստել, որ ադրբեջանական ընդդիմադիր ուժերը նախագահական ընտրություններում առաջադրեն հենց Իբրահիմբեկովին, ով քաղաքականությունում չի եղել, որպեսզի վարկաբեկված կամ խոցելի չլինի իշխանությունների կողմից:

BBC-ին տված հարցազրույցում Իբրահիմբեկովը նշում է. «Վերջին տարիներին ես Ադրբեջանում հիմնադրեցի եւ գլխավորում եմ Մտավորականների ֆորումը, որի գլխավոր առաքելությունը ես հռչակեցի մեր երկրում քաղաքացիական հասարակության ինչ-որ դրսեւորումների հիմնավորումը: Սա երեք տարի առաջ էր, այսօր արդեն մեր ֆորումին են հետեւում հազարավոր մարդիկ, ովքեր ազատ արտահայտում են իրենց կարծիքը այն ամենի մասին, ինչը տեղի է ունենում երկրում: Ես հասկանում եմ, որ քաղաքականության մեջ ես փորձ չունեմ, բայց վերջերս ԱՄՆ-ում էի, այնտեղ ունեցել եմ հանդիպումներ տարբեր շրջանակների ու կազմակերպությունների հետ՝ զրուցելու, հասկանալու, տեսնելու նպատակով: Նույնատիպ հանդիպումներ ես ունենում եմ նաեւ Մոսկվայում: Կապեր կան նաեւ Թուրքիայում...»:

Հավանաբար հենց Թուրքիայում ունեցած կապերի ազդեցությամբ, իսկ գուցե եւ անձնական նախաձեռնությամբ եւ համոզմունքներով, Իբրահիմբեկովը 2012-ի հունվարի 25-ին հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ պաշտոնապես հրաժարվեց ֆրանսիական՝ արվեստի եւ մշակույթի ոլորտում իր ստացած շքանշանից: Իբրահիմբեկովն իր այս որոշումը հիմնավորել էր հանգամանքով, որ Ֆրանսիան պատրաստվում է քրեական պատասխանատվության ենթարկել բոլոր նրանց, ովքեր ֆրանսիական տարածքում կժխտեն Հայոց ցեղասպանությունը. «Ես կարծում եմ, որ այդ օրինագիծը զրկում է ֆրանսիացիներին իրենց ազատ արտահայտվելու տարրական իրավունքից»: Նույն թվականի հուլիսին Ադրբեջանում իշխող «Ենի Ազարբայջան» կուսակցության պաշտոնաթերթը հրապարակեց ռուսական պարբերականներից մեկին Իբրահիմբեկովի՝ դեռեւս 2008-ին տված հարցազրույցը, որի հիման վրա իշխանությունները մեղադրեցին Իբահիմբեկովին «հայերին հավերժ սիրելու մեջ»: Իրականում Իբրահիմբեկովը մի շարք հայ ընկերներ ունի, օրինակ՝ Ղարաբաղում ծնված, ուկրաինական-սովետական կինոռեժիսոր, Ուկրաինայի ժողովրդական արտիստ, սովետական կինոմրցանակի դափնեկիր Ռոման Բալայանը (ում անունը նշվում է նաեւ որպես ՀՅԴ ներկայացուցչի՝ ի դեպ): Նա համարվում է Իբրահիմբեկովի մերձավոր գործընկերներից մեկը, եւ այս հանգամանքը հաշվի առնելով իշխանության պաշտոնաթերթը միայն 4 տարի անց, երբ Իբրահիմբեկովը տարանջատվում էր Ալիեւ ընտանիքից, հիշեց 2008-ին նրա տված հարցազրույցը, որտեղ



Իբրահիմբեկովն ընդամենը նշել էր, որ ինքը կարոտում է Բաքվում եւ Ադրբեջանում ապրած հայերին:

Ուշադրավ են հենց այդ եւ հիմնականում Ղարաբաղի հայերի ու առհասարակ ԼՂՀ-ի հիմնահարցի վերաբերյալ Իբրահիմբեկովի մոտեցումները, որոնք նա որոշակիորեն մանրամասնել է BBC-ին տված հարցազրույցում: Իբրահիմբեկովը նախ շեշտել է հիմնահարցի բարդ եւ խճճված լինելը, այնուհետեւ ասել է. «Երբ Ղարաբաղի բնակիչները տեսնում են, թե ինչ հրեշավոր վիճակում է Ադրբեջանը գտնվում, ինչպես են կոպտագույնս խախտվում այստեղ մարդկանց իրավունքները, ապա բնականաբար նրանք չեն ցանկանա, որ Ղարաբաղը լինի Ադրբեջանի կազմում»: Այս համատեքստում հենց Իբրահիմբեկովը վստահ է, թե «քանի որ ԼՂ բնակիչները Ադրբեջանի քաղաքացիներ են», ապա «չի կարելի նրանց անվանել թշնամի»: «Երբ ես սա ասում եմ Ադրբեջանում, ինձ մեղադրում են հայամետության մեջ, ինչն աբսուրդ է», ասել է Իբրահիմբեկովը՝ շեշտելով. «Քանի դեռ ԼՂ բնակիչները չեն ցանկանա ապրել Ադրբեջանի կազմում, նրանց ոչ ոք չի կարող ստիպել դա անել: Հետեւաբար աշխատանքը պետք է նրանց հետ տարվի: Իսկ աշխատանքը կարող է ընթանալ միայն այն ժամանակ, երբ նրանք տեսնեն-համոզվեն, որ ադրբեջանցի ժողովուրդը նրանց հանդեպ անկեղծ է, որ նրանք մեր ժողովրդի մի մասնիկն են, որ նրանք կարող են իրենց անվտանգ զգալ մեր երկրում»:

### Ինչո՞ւ Իբրահիմբեկովը

Բնականաբար 74-ամյա որեւէ հանրահայտ ադրբեջանցի չէր կարող հարաբերված չլիներ Ալիեւ ընտանիքի հետ: Իլհամ Ալիեւի այսօրվա ամենահավանական մրցակիցը Ալիեւ ընտանիքի մերձավորներից է եղել: Հակառակ պարագայում, համաձայնեք, նա չէր կարող այդքան շատ պետական մրցանակներ ստանալ: Ինքը՝ Իբրահիմբեկովը, պատմելով BBC-ին իր ու Ալիեւների հարաբերությունների մասին, նկարագրում է դրանք որպես «դժվարին սկիզբ ունեցող հարաբերություններ»: «Սովետական ժամանակներում, 60-ականներին, երբ Հեյդար Ալիեւը եկավ իշխանության, ես կուսակցության անդամ չէի, եւ գրում էի ճշմարտությունն այն ամենի մասին, ինչը տեղի էր ունենում իմ երկրում, եւ ինչպես վարվել եմ միշտ», ասում է Իբրահիմբեկովը՝ հիմնավորելով իր ու անձամբ Հեյդար Ալիեւի «դժվարին հարաբերությունները», որոնց հետեւանքով էլ, իր խոսքերով, ստիպված է եղել լքել Ադրբեջանն ու տեղափոխվել Մոսկվա: Հետագայում արդեն, երբ Հեյդար Ալիեւն այլեւս դե յուրե իշխանություն չուներ Ադրբեջանում, վերջինիս, Իբրահիմբեկովի եւ ադրբեջանցի նկարիչ Թահիր Սալախովի միջեւ տեղի է ունեցել «բավականին սրտաբաց ու անկեղծ զրույց, որից հետո մեր հարաբերությունները բարելավվեցին, մենք մտերմացանք», հիշում է Իբրահիմբեկովը: Ավելին, 1999-ին Հեյդար Ալիեւը հանդես է եկել Իբրահիմբեկովին նվիրված ճառով (վերջինիս 60-ամյակի կապակցությամբ), հասկանալի է՝ վերջինիս կարգելով իր մերձավոր-բարեկամների շարքը: Ավելի ուշ, երբ իշխանության է եկել Իլհամ Ալիեւը, Իբրահիմբեկովի խոսքերով՝ «Ես նրանցից էի, ովքեր ողջունեցին նրա իշխանության գալը: Միեւնույն ժամանակ ես ինքնուրույն ու անկախ կյանք էի վարում, որը դուր չէր գալիս իշխանություններին, բայց նրանք ինչ-որ կերպ հանդուրժում էին իմ անկախությունը»: Իբրահիմբեկովը հիշում է նաեւ, որ մինչեւ 2007-ը ինքը Իլհամ Ալիեւի հետ ուներ գերազանց հարաբերություններ, սակայն 2007-ին, երբ նա դիմել է Ալիեւ կրտսերին՝ «ադրբեջանական նավթադոլարների մի զգալի հատվածն էլ ուղղել ադրբեջանական կինեմատոգրաֆիան հրեշավոր իրավիճակից դուրս բերելու նպատակով», Իլհամ Ալիեւը, թեեւ սկզբում համաձայնել է, բայց հետագայում խոստումը դրժել է: Սրանից հետո Իբրահիմբեկովը տարածք է խնդրում իշխանություններից, որը գտնվում է Բաքվի կենտրոնի մերձակայքում, ըստ որոշ տեղեկությունների՝ «ոչ թե ադրբեջանական կինոյի, այլ իր անձնական բիզնես նպատակներով», սակայն Իլհամ Ալիեւը մերժում է Իբրահիմբեկովի խնդրանքը, ըստ երեւույթին վերջնականապես խզելով Ալիեւ ընտանիքի գերազանց հարաբերությունները Իբրահիմբեկովի հետ: Հենց այս ամենից հետո էլ «Ենի Ազարբայջան» պաշտոնաթերթը հանկարծ վերհիշում է Իբրահիմբեկովի չորս տարվա վաղեմության հարցազրույցն ու մեղադրում նրան «հայերի հանդեպ հավերժ սեր ունենալու մեջ»:

Իբրահիմբեկովը մտնում է քաղաքականություն, նրան՝ նախագահի թեկնածու առաջադրում են Ադրբեջանի ընդդիմադիր ուժերը, հետեւաբար նա Իլհամ Ալիեւի գլխավոր մրցակիցն է: Նա քաղաքականության մեջ անփորձ նորեկ է, հետեւաբար կարող է եւ ձայներ ստանալ բոլոր նրանցից, ովքեր դեռ հիշում ու նայում են «Անապատի սպիտակ արեւը», իսկ այդպիսիք Ադրբեջանում բնականաբար կան, բայց, միեւնույն ժամանակ, նա հազիվ թե կարողանա հաղթել Իլհամ Ալիեւին, որի ղեկավարությունն, ի դեպ, ըստ Իբրահիմբեկովի՝ «Ադրբեջանում Մոսկվայի դրածո ղեկավարությունն է». «Պուտինը մշտապես ասել է, որ ինքը սատարում է Իլհամ Ալիեւին հայր Ալիեւի անձնական խնդրանքով», ասել է Իբրահիմբեկովը BBC-ին:

Հետեւաբար, Ադրբեջանի գալիք ընտրությունները գոնե այս պահին նման են Բելառուսի անցած նախագահական ընտրություններին, որտեղ «հավերժ նախագահ» Լուկաշենկոյի հետ մրցակցում էին, ըստ էության լավ, բայց քաղաքականության մեջ անփորձ մարդիկ՝ Միլինկեւիչն ու Սաննիկովը: Բայց եթե անգամ նրանք հրաշալի մարդիկ են, բայց քաղաքականապես միամիտ, ապա նրանց մասնակցությունը ընտրություններին ի սկզբանե դատապարտված էր անհաջողության:

Հետեւաբար, Իլհամ Ալիեւին խիստ ձեռնտու է, որ իր հիմնական մրցակիցը արդեն այս պահին դատապարտված է անհաջողության, եւ Իբրահիմբեկովն ինքը, ինչպես նաեւ նրան առաջադրած ադրբեջանական ընդդիմությունն ու ադրբեջանցի ժողովուրդը սա հրաշալի հասկանում են: Հակառակ պարագայում, Իբրահիմբեկովը չէր նշի. «Ես վախենում եմ ե՛ւ ձերբակալությունից, ե՛ւ մարդասպանությունից»:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

# ԱՄՆ-Եվրոմիություն՝ փոխադարձ վստահությունը խաթարված է

«Ոչ միայն մեր, եվրոպական կամ ասիական, այլեւ որեւէ այլ երկրում գործող հետախուզական ծառայությունների նպատակն է ավելի լավ հասկանալ, թե ինչ է կատարվում աշխարհում այնպիսի աղբյուրներից, որոնք չեն հրապարակվում «Նյու Յորք թայմսի» կամ «NBC նյուսի» միջոցով: Եթե այդպես չլիներ, ապա կարիք չէր զգացվի պահելու հետախուզական ծառայությունների մի ամբողջ ապարատ», փորձելով արդարանալ՝ ասել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Տանզանիայում գտնվելու օրերին, պատասխանելով այն մեղադրանքներին, որոնք վերջին շրջանում հնչում են Ամերիկայի դեմ Սնոուդենի բացահայտումներից հետո:

Այս մասին Դար էս Սալամից հաղորդելով, Ռոյթեր գործակալությունը ավելացնում է, որ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին էլ Բրունեյում գտնվելու օրերին իր հերթին ասել է, որ Մ. Նահանգները միակ երկիրը չէ, որ «մի շարք գործողություններ» է իրականացնում՝ ապահովելու համար իր անվտանգությունը: «Ինչքան տեղյակ եմ, դա անսովոր պրակտիկա չէ շատ երկրների համար», նշել է նա:

Մյուս կողմից՝ Ֆրանսիայի նախագահ Օլանդը համաձայնելով հանդերձ, որ վերահսկողությունը անհրաժեշտություն է ահաբեկչությունների դեմ պայքարելու համար, «անհանդուրժելի է» համարել նման արարքները բարեկամների եւ դաշնակիցների միջեւ:

Մեքսիկայի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Գաբրիելա Կուեւասն էլ հավելել է, որ Ամերիկան առաջին հերթին պետք է ներողություն խնդրի բոլոր այն երկրներից, որոնց վնաս է պատճառել:

Եվրոմիության մի շարք քաղաքագետներ առաջարկել են սառեցնել Մ. Նահանգներ-Եվրոմիություն ազատ առեւտրի բանակցությունները, որ նախատեսվում է անցկացնել Վաշինգտոնում առաջիկա հուլիսի 8-ին: «Մենք մեր ամերիկացի գործընկերներից հստակ բացատրություն ենք պահանջում», նշել է Եվրոհանձնաժողովի խոսնակ Պիա Հանսենը:

Բեռլինում արդարադատության նախարար Սաբին Լութաուսեր-Շնարենբերգերը լրտեսության գործողությունները նմանեցրել է սառը պատերազմի տարիների թշնամանքին: «Չէինք պատկերացնում, որ մեր բարեկամները Մ. Նահանգներում մեզ որպես թշնամիների են տեսնում», ասել է նա: Եվրոմիության խորհրդարանի նախագահ Մարտին Շուլցն էլ նշել է, որ Մ. Նահանգները անցել է «բոլոր սահմանները»: «Վստահ էի, որ բռնատերերի եւ ավտորիտար համակարգերի կողմից իրականացվում են գաղտնալսումներ... բայց բարեկամների, դաշնակիցների կողմից կատարվածը պարզապես ցնցող է», ասել է նա «France-2» ռադիոկայանին տված հարցազրույցի ժամանակ:

Հակառակ Մ. Նահանգներ-Եվրոմիություն ուժեղ կապերին՝ լրտեսական մտահոգությունները մնում են այժմեական:

Հ. Ծ.

# Հայաստանի հետ կարգավորելու հարցեր կան, Ռուսաստանն էլ կարծես մեջն է

## *Իվանիշվիլին ներկայացրել է իր տեսակետները, քանի դեռ նախագահի ընտրությունների միայն օրն է հայտնի*

Վրաստանում նախագահի սպասվող ընտրություններից առաջ, որոնք արդեն իսկ կայացված որոշմամբ տեղի կունենան հոկտեմբերի 31-ին, Վրաստանի վարչապետ, միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին իրավիճակային ինչ-որ հստակություն է փորձել մտցնել այն ամենի մեջ, ինչ վերաբերում է Վրաստանի ներքին եւ արտաքին քաղաքականությանը, միեւնույն ժամանակ անհստակ թողնելով առավել կարեւոր հարցերի պատասխանները:

Երեկ Իվանիշվիլին, ինչպես եւ խոստացել էր, մամուլի ընդարձակ ասուլիսի ընթացքում հայտարարել է, թե Վրաստանը Հայաստանի հետ կարգավորելու շատ հարցեր ունի: «Եվ դա չի վերաբերում միայն Ռուսաստանի հետ փոխհարաբերություններին, այլ մենք քննարկում ենք նաեւ մեր երկկողմ հարաբերություններին վերաբերող հարցեր», ասել է վրացի միլիարդատերը՝ արձագանքելով լրագրողներից մեկի՝ վերջին շրջանում Վրաստանի կառավարության անդամների Երեւան հաճախակիացած այցելությունների մասին հարցին:

Որ հայ-վրացական հարաբերություններում կարգավորման կարիք ունեցող շատ հարցեր կան, Իվանիշվիլու մտքի թռիչքի արդյունքը չէ, սակայն Երեւան հաճախակիացած այցելություններն էլ միշտ չէ, որ կապված են հենց երկկողմ հարաբերություններում առկա խութերի հետ: Թեեւ Ռուսաստանի հետ փոխհարաբերության նշումը հայ-վրացական համատեքստում կարելի է դրականորեն մեկնաբանել, չնայած Իվանիշվիլին հայտարարել է նաեւ, թե «Ռուսաստանն այսօր Վրաստանի համար ամենածանր եւ հետաքրքրական հարցն է»:

Վրաստանի վարչապետի տեղեկացմամբ՝ կոնկրետ քայլեր արվում են, թեեւ կա մտահոգություն «այսպես կոչված սահմանների» հետ տեղի ունեցողի մասով: «Հաջորդ քայլերի առնչությամբ ասեմ, որ հրաշքների չեմ սպասում: Չեմ սպասում, որ վաղը կամ մյուս օրը մենք կվերականգնենք տարածքային ամբողջականությունը, եւ որ դա Ռուսաստանն է որոշելու»:

Իվանիշվիլու մեկնաբանությամբ, «բնական է, որ Ռուսաստանը մեծ դեր ունի, բայց մենք, էլ պակաս, եթե ոչ ավել դեր չունենք»: «Մենք պետք է մտածենք ոչ թե տարածքները վերադարձնելու, այլ այն մասին, թե ինչպես համոզենք մեր եղբայր աբխազներին ու օսերին, որ մեր համատեղ կյանքը ավելի լավ է, քան այն, ինչ տեղի է ունենում այսօր», ասել է Վրաստանի վարչապետը՝ այդ համատեքստում կարեւորելով տնտեսության դերը այն մոտեցմամբ, որ հարկավոր է Վրաստանը հետաքրքրական դարձնել նախ հենց վրացիների համար, ապա՝ նաեւ աբխազների եւ օսերի:

Վրաց-ռուսական հարաբերությունների հետագա զարգացումը Իվանիշվիլին տեսնում է, որ նախ կվերականգնվեն Թբիլիսի-Մոսկվա չվերթերը, վիզային ռեժիմի հարցը կլուծվի, 2014-ի Սոչիի օլիմպիադային էլ Վրաստանը հնարավոր աջակցություն կտրամադրի՝ խաղաղ անցկացնելու համար, ինչը մեծագույն կարեւորություն ունի Ռուսաստանի համար: Եվ սա այն պարագայում, որ նույն Իվանիշվիլու համոզմամբ Վրաստանը ներկա փուլում զենք ձեռք բերելու կարիք չունի, ասել է թե արկածախնդրության չի գնալու:

Հայաստանի հետ կարգավորման հարցեր ունենալու համատեքստում հետաքրքրական է նաեւ, որ Իվանիշվիլին վերահաստատել է իր կառավարության կողմից աբխազական երկաթուղու վերագործարկման առնչությամբ պատրաստակամությունը:

«Աբխազիայով անցնող երկաթուղային հաղորդակցությունը անպայման կվերականգնվի, բայց դրա համար ժամանակ է անհրաժեշտ», «Գրուզիա օնլայն» կայքէջի փոխանցմամբ՝ հայտարարել է Իվանիշվիլին: Ըստ նրա, այդ երկաթուղին անհրաժեշտ է ինչպես Վրաստանի տնտեսական զարգացման, այնպես էլ աբխազների հետ հարաբերությունների կարգավորման համար:

«Ինչքան շատ ճանապարհ, այդքան մեծ հնարավորություններ զարգացման համար. սա աքսիոմա է», ասել է Վրաստանի վարչապետը: Իսկ թե ինչու սայլը տեղից չի շարժվում, Իվանիշվիլին նշել է, որ ներկա փուլում խնդիրներ են առաջացել, քանի որ հարցը շատ քաղաքականացված է. «Առաջին հերթին, մենք մեր ժողովրդին պետք է բացատրեինք այդ ճանապարհի վերականգնման անհրաժեշտությունը, ըստ իս, դա մեզ հաջողվեց, եւ մենք կսկսենք շարժվել այդ ուղղությամբ»:

Մեկ այլ հարց, որ անմիջապես առնչվում է հայերին, վերաբերում է կրոնական փոքրամասնությունների իրավունքներին, որոնք հարգելու խոստում է տվել Իվանիշվիլին՝ անդրադառնալով Սամթացկարո գյուղի ուղղափառների կողմից մուսուլմաններին աղոթք անելն արգելելու դեպքերին: Տվյալ դեպքում այնքան կարեւոր չէ կոնկրետ միջադեպը, որքան այն, որ Իվանիշվիլին օրենքը պաշտպանելու համատեքստում հայտարարել է, որ վրացական իշխանությունները խիստ կլինեն ու կպաշտպանեն բոլոր կրոնական փոքրամասնությունների իրավունքները:

Մնացյալ հարցերից, որոնց պատասխանել է Իվանիշվիլին, նշենք, որ, ըստ վարչապետի, ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրումը կարագացվի, վարչապետը քաղաքականությունից, այդուամենայնիվ, կհեռանա, թեեւ երկրից չի հեռանալու, քանի դեռ պատասխան չի տվել բոլոր հարցերին:

**Վ. ՊՈՂՈՍՅԱՆ**

ԿԱՀԻՐԵ

# Եգիպտական բանակն ունի իշխանափոխության ծրագիր

## *Մուրսիի խորհրդականը դիմել է Արեւմուտքին*



Եգիպտոսի մայրաքաղաքում եւ մյուս բնակավայրերում հուլիսի 3-ին իրադրությունը մնում էր լարված: Կահիրեում բանակային ստորաբաժանումներ էին տարվում նախագահ Մուհամմեդ Մուրսիի կողմնակիցների կուտակման շրջաններ, հաղորդում է BBC-ն: Մինչ այդ հայտնի էր դարձել, որ երկրի զինված ուժերի ղեկավարությունը կազմել է իշխանափոխության ծրագիր, որը գործի կդրվի, եթե քաղաքական ուժերը չկարողանան խաղաղ ելք գտնել ներկայիս ճգնաժամից:

Պաշտպանության նախարարության աղբյուրներ վկայակոչելով՝ Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ բանակը ծրագրում է ցրել խորհրդարանը, որտեղ մեծամասնություն են կազմում իսլամիստ Մուրսիի կողմնակիցները, եւ կասեցնել իսլամիստների թելադրանքով գրված սահմանադրության գործողությունը:

Դրանից հետո երկրի ղեկավարումը կստանձնի անցումային խորհուրդը, որը կպատրաստի սահմանադրության ուղղումներ եւ կանցկացնի համընդհանուր ընտրություններ: Տվյալ ծրագրում տեղ չկա նախագահ Մուրսիի համար:

Վերջին տեղեկությունների համաձայն, Մուրսիի մերձավորագույն օգնականը ԱՄՆ-ից եւ Եվրոմիությունից խնդրել է միջազգային զորաբաժին ուղարկել նախագահին ցուցարարներից պաշտպանելու համար: Եգիպտական «Ալ Վաթան» կայքէջի տվյալներով, նախագահի արտաքին քաղաքականության գծով օգնական, «Մուսուլման եղբայրներ» շարժման ղեկավարության ազդեցիկ անդամ Իսլամ Խադդադը վերջերս օգնության հարցով «ընդլայնված խորհրդակցություններ» է անցկացրել ամերիկացիների եւ եվրոպացիների հետ: Արդյունքի մասին ոչինչ չի հաղորդվում:

Ընդդիմությունը ՄԱԳԱՏԷ-ի նախկին ղեկավար Մուհամմեդ էլ Բարադեյին նշանակել է իր ներկայացուցիչը կառավարության հետ վարվելիք բանակցություններում: Իշխանությունների ներկայացուցիչ է նշանակվել վարչապետ Հիշամ Կանդիլը: Թե երբ են սկսվելու բանակցությունները, հայտնի չէ:

Կահիրեում եւ այլուր մերթ ընդ մերթ տեղի են ունենում Մուրսիի կողմնակիցների եւ հակառակորդների բախումներ: BBC հեռուստաալիքի տվյալներով, միայն երեքշաբթի օրը սպանվել է առնվազն 3 մարդ: Լույս չորեքշաբթի գիշերը լուր ստացվեց, որ Կահիրեում բախումների ժամանակ սպանվել են Մուրսիի առնվազն 22 կողմնակիցներ, մոտ 200 մարդ վիրավորվել է: Վերջին 1 շաբաթվա ընթացքում Եգիպտոսում սպանվել են առնվազն 53 եւ վիրավորվել 1500-2000 անձինք:

# Գաղտնալսման սարք Լոնդոնում Էկվադորի դեսպանատանը

Էկվադորյան La Hora թերթը տեղեկացնում է, որ Լոնդոնում աշխատող էկվադորցի դիվանագետները իրենց դեսպանության շենքում գաղտնալսման սարք են հայտնաբերել:

Կիտոյում կազմակերպված մամլո ասուլիսում Էկվադորի արտգործնախարար Ռիկարդո Պատինյոն պատմել է, որ սարքը գտել են շենքի անվտանգության համակարգի սպասարկման աշխատանքների ժամանակ: Այն հայտնաբերվել է Մեծ Բրիտանիայում Էկվադորի դեսպան Անա Ալբանի աշխատասենյակում:

Պատինյոն մանրամասնել է, որ գաղտնալսման սարքը գտել են հունիսի 16-ին, երբ ինքը Մեծ Բրիտանիա էր մեկնել եւ հանդիպելու էր արդեն 1 տարի Էկվադորի դեսպանատանը բնակվող Ջուլիան Ասանժի հետ: Այն ժամանակ միջադեպի մասին չէին հայտարարել, որպեսզի հնարավոր սկանդալը չհամընկնի Պատինյոյի լոնդոնյան այցելության հետ:



Մամլո ասուլիսի ժամանակ Պատինյոն խոստացել է շատ շուտով հայտնել, թե որ երկրի հատուկ ծառայություններն էին տեղադրել գաղտնալսման սարքը: Նախարարը չի մեկնաբանել այն ենթադրությունները, թե սարքը ԱՄՆ գաղտնի գործողության մի մասն է: Նա խոստացել է պարզաբանում պահանջել մեղավորներից:

Արտգործնախարարը նաեւ պատմել է Էկվադորի կառավարության էլեկտրոնային փոստի «կոտրման» մասին: Դրա հետեւանքով փաստաթղթերի մի մասը հայտնվել էր ԶԼՄ-ներում: Մասնավորապես Univision հեռուստաալիքը հրապարակել էր ԿՀՎ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենին Էկվադորի լոնդոնյան հյուպատոսի տված տարանցիկ փաստաթղթերը: Ավելի ուշ Էկվադորի կառավարությունը եւ նախագահը հայտարարել էին, թե դիվանագետը գործել է սեփական հայեցողությամբ եւ իր գործողությունները չի համաձայնեցրել Կիտոյի հետ:

# Թուրքիայի փոխվարչապետը պնդում է, թե ինքը չի մեղադրել հրեաներին

**Թուրքիայի փոխվարչապետ Բեշիր Աթալայը հուլիսի 3-ին հերքել է իրեն վերագրված այն խոսքերը, թե երկրում բողոքի զանգվածային ցույցերի կազմակերպիչը հրեական համայնքն է: Այդ մասին հաղորդում է Hurriyet Daily News կայքէջը:**

**Փոխվարչապետի մամլո ծառայությունում ասել են, թե Աթալայը հրեաներին վիրավորելու մտադրություն չի ունեցել: Նրա օգնականների տվյալներով, Աթալայի խոսքերը սխալ են մեջբերվել եւ կտրվել են համատեքստից, ինչը դրանց հաղորդել է նոր հնչողություն, գրում է Today´s Zaman թերթը:**

**Նախօրեին թուրքական ԶԼՄ-ները տարածել էին Աթալայի տեսագրված հայտարարությունները, որոնցում նա օտարերկրյա ուժերին եւ հրեական համայնքին մեղադրել է Թուրքիայում զանգվածային ելույթների կազմակերպման մեջ: Իսրայելական newsru.il կայքէջը մանրամասնում է, որ կառավարող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության շրջանային բաժանմունքներից մեկում՝ Աթալայն ասել է, թե Թուրքիայից փախած որոշ հրեաներ նախանձում են երկրի արագ վերելքին եւ «փորձում են դրան խանգարել»:**

**Թուրքական Sabah թերթը հաղորդում է, որ Իսրայելն արդեն հակազդել է Աթալայի հայտարարություններին: Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ Գազայի հատված եւ Ռամալլահ կատարելիք այցից առաջ ժամանակավորապես դադարեցվել է Իսրայելի մուտքի արտոնագրի տրամադրումը Թուրքիայի քաղաքացիներին: Անկարայում Իսրայելի դեսպանը արդեն համապատասխան հրահանգ է ստացել իր երկրի ԱԳՆ-ից:**

# Ջիգարխանյանի թատրոնի ներկայացմամբ մեկնարկեց «Դուետ» միջազգային թատերական փառատոնը






Կյանքում պատահում է եւ այնպես, որ երկու տղամարդու ոչ միայն բաժանի, այլ նաեւ կապի սերը նույն կնոջ նկատմամբ: Այդպիսի մի իրավիճակ է ներկայացված Մոսկվայի Արմեն Ջիգարխանյանի ղեկավարած պետական դրամատիկական թատրոնի «Սրճարան «Կյանքը վարդագույն լույսի մեջ» ներկայացումում, որտեղ Լինդել Գոլդշտեյնի ստեղծագործության երկու հերոսների երկխոսության միջոցով երեւակվում են նրանցից ամեն մեկի՝ արդեն կյանքից հեռացած այդ կնոջ ամուսնու եւ նույն կնոջն ամբողջ կյանքում քնարական զգացմունքով սիրած մարդու հինգ տասնամյակների խնամքով թաքցված հույզերն ու ապրումները... Հուլիսի 1-ին Գյումրիի Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի բեմում այս ներկայացմամբ մեկնարկեց «Դուետ» միջազգային թատերական փառատոնը, որն անցկացվում է «Գյումրին ԱՊՀ 2013 թվականի մշակութային մայրաքաղաք» միջպետական ծրագրի շրջանակներում եւ տեւելու է ութ օր: Ներկայացման երիտասարդ բեմադրիչը ծնունդով գյումրեցի, այժմ Փարիզում ապրող Լեւոն Մինասյանն է՝ ներկայումս հայտնի Լեո Ման անունով, որը մոսկովյան թատրոնում այս գործը բեմադրել է Արմեն Ջիգարխանյանի հրավերով:

«Դուետ» միջազգային թատերական փառատոնը, որը Գյումրիում նորություն է, կազմակերպել են ՀՀ մշակույթի նախարարությունը եւ ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամը՝ Վարդան Աճեմյանի անվան թատրոնի նախաձեռնությամբ: Նրանում ընդգրկված ներկայացումները ցուցադրվելու են այստեղ եւ Գյումրու Արվեստների ակադեմիայի դահլիճում: Մասնակից 19 «դուետներից» (երկու դերասանով ներկայացում), որոնք ընտրվել են մրցույթով, 12-ը Հայաստանից են, մյուսները՝ Ֆրանսիայից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից: Փառատոնի բյուջեն 11 մլն 600 հազար դրամ է, որի 6 մլն դրամը հատկացրել է ԱՊՀ ներկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամը, 5 մլնը՝ Հայաստանի մշակույթի նախարարությունը: Բոլոր ներկայացումներին հաջորդելու են հեռուստաքննարկումներ:

Առաջին ներկայացման մեջ հանդես են եկել հիշյալ մոսկովյան թատրոնի դերասաններ Անատոլի Կոտը եւ Ստանիսլավ Էֆենտովը: Ներկայացումը ջերմորեն է ընդունվել գյումրեցի հանդիսատեսի կողմից: Թատրոնի գեղարվեստական ղեկավար, մեր հայրենակից Արմեն Ջիգարխանյանը, իր ուղերձում ողջունելով այս փառատոնը, հույս է հայտնել, որ այն կդառնա տարվա ամենավառ հիշվող իրադարձություններից մեկը ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ այլ երկրներից մասնակիցների համար:

**Գ. Մ.**

ԲԵՅՐՈՒԹ

# «Արին» պարախմբի «Լեռներու կանչը»

Բեյրութի Էմիլ Լահուդի անվան հանդիսասրահում մայիսի 11-ին ՀԲԸՄ-ՀԵԸ «Արին» պարախմբի ունեցած փայլուն ելույթի մասին ներկայացնում է Մոնրեալի «Ապագայ» թերթը՝ Բեյրութից Համո Մոսկոֆյանի թղթակցությամբ:

Նույն օրերին **«Ազգի»** խմբագրությունը ստացել էր նաեւ պարային այս խմբի ելույթի գեղարվեստական հայտագիրը, որ նվիրված է վաղամեռիկ Արին Չերչյանի հիշատակին. նրա անունով խումբն է անվանակոչվել:




Այս տարեշրջանի խմբի հայտագիրը նվիրված է Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյակին: Ինչպես ներկայացված է, «Արին» պարախումբը պարարվեստի ներկա մակարդակին կարողացել է հասնել տեւական ու համբերատար խմբային աշխատանքի ու նվիրումի շնորհիվ: Բացի բուն մասնագիտական աշխատատար փորձերից պակաս կարեւոր չեն եղել նոր տարազների ձեւավորման եւ բեմադրության աշխատանքները:

«Արին» պարախմբի մայիսյան ոգեշունչ ելույթի առիթով խմբի գեղարվեստական ղեկավար եւ պարուսույց Գայանե Մածունյանը ներկայացնում է այն որպես հայկական հնամենի պարերից հյուսված գեղեցիկ մի պատմություն՝ արդիական շնչով նորոգված, որի մեջ անգնահատելի ավանդ է ունեցել հայտնի պարահավաք եւ ազգագրագետ Գագիկ Գինոյանը՝ նրա բարձրակարգ եւ վարպետ աշխատանքը պարախմբի հետ: Ինչպես ներկայացված է հայտագրում, աշխատանքային 7 գերխիտ շաբաթների ընթացքում «Արինի» անդամները ոչ միայն ծանոթացել են կյանքի առօրյայից արդեն հեռացած ավանդական պարերին, այլեւ բախտ են ունեցել ձեռք բերելու նոր ուսուցիչ եւ ընկեր, որից շատ բան են սովորել, հատկապես հայ պարի իմաստային շերտերին, հայ ազգային մշակույթի հարստություններին վերաբերող:

Համերգ-ներկայացման առաջին մասում հանդիսականը հաճույք է ունեցել վայելելու հայ ազգագրական եւ ազգային հայտնի պարային կատարումներ: «Լեռներու կանչի» երկրորդ մասով պարախումբը հարգանքի տուրք է մատուցել Արամ Խաչատրյանին՝ կոմպոզիտորի ծննդյան 110-ամյակի առիթով ներկայացնելով պարային գեղեցիկ կոմպոզիցիա՝ Խաչատրյանի ստեղծագործությունների հիման վրա:

Համերգի ավարտին ՀԵԸ շրջանային վարչության ատենապետ Վիգեն Չերչյանը շնորհակալությամբ պարգեւատրել է պարուսույցներ Գագիկ Գինոյանին եւ Գայանե Մածունյանին, նաեւ ՀԵԸ պարախմբի վարչության անդամներին:

«Կը յուսանք, որ «Արին» պարախմբի մէջ տիրող պրպտումի ալիքը բեմէն ոգեւորէ նաեւ մեր հանդիսատեսը, որպէսզի բոլորս ալ աւելի ուշադիր ըլլանք մեր ազգային ժառանգութեան հանդէպ եւ անցնելով մեր վերնագրային գիտելիքներու սահմանը՝ նախանձախնդիր ըլլանք հայ մշակոյթի եւ արուեստի աւելի խոր ուսումնասիրութեան եւ անոր աւելի գիտակից պահպանման», գրում է Գ. Մածունյանը:

Հայտագիր-բրոշյուրը ներառում է Արամ Խաչատրյանի եւ Գագիկ Գինոյանի կենսագրական ակնարկներ, պարախմբի ելույթների մամուլի արձագանքների պատառիկներ, խմբի անդամների լուսանկարներ, ներկայացված է նաեւ հիշյալ ելույթի պարերի ցանկը:

**Ս. Բ.**

ԲԱԶՄԱԺԱՆՐ

# Երաժշտության շաբաթ Երեւանում

**Սեպտեմբերի 23-29-ը կմեկնարկի «Երաժշտության շաբաթ Երեւանում» փառատոնը: Համերգներն իրենց մեջ ներառելու են երաժշտական տարբեր ժանրեր ներկայացնող արտիստներ. ազգագրական, ռոք, դասական, ջազ եւ էստրադա:**

**«Երաժշտության շաբաթը Երեւանում» փառատոնը նախատեսվում է անցկացնել ամեն տարի, որը կբացահայտի մեր երկրի, սփյուռքի, ինչպես նաեւ այլ երկրների երաժշտական լավագույն կատարողներին, որոնք մնում են էկրանից այն կողմ:**

**«Երաժշտության շաբաթը Երեւանում» դա համերգային ծրագրերի, մենահամերգների, ստեղծագործական երեկոների, ձայնասկավառակների շնորհանդեսների շարք է լինելու, որը փորձելու է ինչպես արժանին մատուցել հայկական երաժշտության մեծերին, այնպես էլ նոր տաղանդներ բացահայտել: Երաժշտական ծրագրերի յուրօրինակությունը կայանում է նրանում, որ դրանք ոչ թե սովորական համերգային ծրագրեր են, այլ իրենց ձեւաչափով գրավիչ ստեղծագործական հանդիպումներ՝ արտիստի եւ հանդիսատեսի անմիջական շփումով, բլից-հարցազրույցներով եւ բեմականացումներով:**




**Սեպտեմբերի 24-ին տեղի կունենա ազգային երգի օրը: Ի դեպ, համերգներից մեկը նվիրված է լինելու Հայաստանի ժողովրդական արտիստուհի Ֆլորա Մարտիրոսյանին, որը պետք է փառատոնին մենահամերգով ներկայացներ ժողովրդական երգի օրը, սակայն... Այդ համերգի օրը հանդիսատեսը հնարավորություն կունենա լսելու երգչուհու լավագույն ձայնագրությունները եւ հայկական երաժշտության, էստրադայի արտիստների կատարումները:**

**Մյուս համերգը՝ սեպտեմբերի 25-ին, որը ռոք ուղղվածության է լինելու, կատարումներով հանդես կգա «Դորիանս» ռոք խումբը: Իսկ հաջորդը՝ դասական համերգը, տեղի կունենա սեպտեմբերի 26-ին, որին իրենց մասնակցությունը կբերեն Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը, Վազգեն Վարդանյանը եւ Իգոր Պոլտավցեւը:**

**Համերգաշարին իրենց ներկայությամբ հետաքրքրական երանգ կավելացնեն Լեւոն Մալխասյանը, Արմեն Ուսնունցը, Վահագն Հայրապետյանը, Տիգրան Պետրոսյանը եւ Մարիամը: Վերոնշված երաժիշտների կատարումները կարող եք լսել սեպտեմբերի 27-ին, ջազ համերգի շրջանակում:**

**Իսկ ահա էստրադային համերգին հնարավորություն կունենանք վայելելու Էռնա Յուզբաշյանի կատարումները, իսկ որպես հյուր համերգին ներկա կլինի Արթուր Գրիգորյանը: Սեպտեմբերի 29-ին տեղի կունենա գալա համերգը, որում հանդես կգան հայկական էստրադային մի շարք երգիչ-երգչուհիներ:**

**«Երաժշտության շաբաթ Երեւանում» փառատոնի համապրոդյուսերն ու գլխավոր ռեժիսորը Էմիլ Կարասն է, որն այս փառատոնի շրջանակում յուրաքանչյուր արտիստի հետ աշխատելու է, ստեղծելու է կերպար եւ յուրաքանչյուր կատարման համար հատուկ բեմադրություն է ներկայացնելու:**

**Սպասվում են հետաքրքրական բեմադրություններ:**

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

**Հուլիսի 4-ին, ժամը 11:00, Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքի մեծ դահլիճում տեղի կունենա Հայաստանի ազգային գրադարանի օրվան նվիրված միջոցառում:**
***Ստորեւ ներկայացնում ենք միջոցառման ծրագիրը:***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՕՐ

***Ժամը 11:00***

**1.** *Բացման խոսք-ՀԱԳ տնօրեն Տ. Զարգարյան*
**2.** *Ելույթներ*

**2.1** *Ռուզան Տոնոյան (Հայկական գրադարանային ասոցիացիայի նախագահ, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի տնօրեն),*
**2.3** *Գուլիկո Նահատակյան (Երաժշտագիտական գրադարանի տնօրեն),*
**2.4** *Շիրակ Թորոսյան (ԱԺ պատգամավոր),*
**2.5** *Բալաբեկ Մելյան (մատենագետ, գրքագետ),*
**2.6** *Մարգարիտա Խաչատրյան (բանասիրական գիտությունների դոկտոր)*

**3.** Գեղարվեստական կատարումներ
**4.** Պատվոգրերի հանձնում

### ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

***Ժամը 14:00***

Գրքագետ, մատենագետ Նինել Ոսկանյանի ծննդյան 90-ամյակին նվիրված միջոցառում

(**Թամանյանական մասնաշենք)**

ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից նվիրված գրականության ցուցադրություն

**(Թամանյանական մասնաշենք)**

**Ժամը 15:00**

«Բազմավեպ» հանդեսի 170-ամյակ, ցուցահանդեսի բացում

**(Վարչական մասնաշենք, 4-րդ հարկ)**

# Մարզական

## Սերգեյ Պալկին. «Մխիթարյանը 30 մլն դոլարի դիմաց կարող է խզել պայմանագիրը «Շախտյորի» հետ»

Հենրիխ Մխիթարյանի տրանսֆերի շուրջ անորոշ իրավիճակը շարունակվում է ու արդեն սկսում է լրջորեն անհանգստացնել հայ ֆուտբոլիստի ճակատագրով մտահոգվողներին: Ըստ որոշ լրատվամիջոցների, «Լիվերպուլն» արդեն «Շախտյորի» հետ իբրեւ համաձայնեցրել էր գործարքի կնքման հարցը եւ արդեն այս շաբաթվա ընթացքում պետք է պաշտոնապես այդ մասին հայտարարվեր: Սակայն Մխիթարյանն առ այսօր Երեւանում է ու մարզավիճակը պահպանելու նպատակով մարզվում է ֆուտբոլի ակադեմիայում: Հենրիխը չի ցանկանում շփվել լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, ուստի հնարավոր չէ պարզել իրողությունը:



Իսկ ահա «Շախտյորի» ներկայացուցիչները գնալով ավելի կոշտ դիրքորոշում են դրսեւորում Հենրիխի բացակայության փաստի վերաբերյալ ու սպառնում են տուգանել եւ պատժել նրանն թիմի հավաքին չներկայանալու համար: Ուկրաինական football.ua կայքին տված հարցազրույցում «Շախտյորի» գլխավոր տնօրեն Սերգեյ Պալկինն անդրադարձել է Մխիթարյանին. «Մխիթարյանից առայժմ որեւէ նորություն չկա: Մենք «Տոտենհեմից» եւ «Լիվերպուլից» պաշտոնապես որեւէ առաջարկ չենք ստացել: Ես արդեն ասել էի, որ առաջարկ ենք ստացել Դորտմունդի «Բորուսիայից», որը պատրաստ է 30 մլն դոլար վճարել Մխիթարյանի տրանսֆերի համար: Մեր պահանջը 30 մլն եվրո է: Դա միակ առաջարկն է, որ ստացել է «Շախտյորը»: Մխիթարյանի պայմանագրում նշված չէ նրա հրաժարագինը: Այնտեղ նշված է տուգանքը՝ պայմանագիրը միակողմանի խզելու դեպքում: Եթե Մխիթարյանը ցանկանում է խզել պայմանագիրը «Շախտյորի» հետ, ապա նա պետք է 30 մլն դոլար վճարի: Իսկ եթե գնում ենք քաղաքակիրթ ճանապարհով եւ վաճառում ենք ֆուտբոլիստին՝ չխզելով նրա հետ պայմանագիրը, ապա մեր սահմանած գումարը 30 մլն եվրո է: Եթե նրա համար առաջարկվող գումարը չբավարարի «Շախտյորին», իսկ ֆուտբոլիստն էլ չներկայանա թիմ, ապա կպատժվի համաձայն պայմանագրում եղած պատժամիջոցների: Այնպես որ դա մեզ համար խնդիր չէ»:

## Կլիչկո-Պովետկին մենամարտը կկայանա Մոսկվայում




**Վլադիմիր Կլիչկոյի եւ Ալեքսանդր Պովետկինի միջեւ երկար սպասված մենամարտի կայացման հարցում վերջապես վերջնական որոշում է ընդունվել: Կողմերի միջեւ պայմանագիրը կնքվել ու հաստատվել է WBA-ի կողմից: Բռնցքամարտիկները ռինգ դուրս կգան հոկտեմբերի 5-ին Մոսկվայի «Օլիմպիյսկի» մարզասրահում:**

**Երկու հանրահայտ բռնցքամարտիկների միջեւ մենամարտի անցկացման շուրջը բանակցությունները երկար տեւեցին: Դեռեւս ապրիլին Պանամայում անցկացված մրցույթում Պովետկինի մենեջեր Վլադիմիր Խրյունովը շահեց մենամարտը կազմակերպելու իրավունքը՝ առաջարկելով պրոֆեսիոնալ բռնցքամարտում մինչ օրս չգրանցված ռեկորդային գումար՝ 23 մլն դոլար: Դա այն դեպքում, որ Կլիչկո եղբայրների պրոմոութերական ընկերությունն առաջարկել էր 7 մլն դոլար, իսկ Sauerland Event-ը պատրաստ էր 6 մլն-ով կազմակերպելու մենամարտը:**

**Այսպիսով, սպասվում է, որ մենամարտի համար Կլիչկոն կստանա մրցանակային հիմնադրամի 75 տոկոսը՝ 17,2 մլն դոլար: Մենամարտը կարող էր տեղի ունենալ արդեն օգոստոսին, սակայն կողմերը չէին համաձայնվում դոպինգ ստուգման համար ընկերություն գտնելու հարցում: Ուստի որոշվեց մենամարտն անցկացնել հոկտեմբերին:**

**Վլադիմիր Կլիչկոյի եւ Ալեքսանդր Պովետկինի միջեւ մենամարտի անցկացումը մեկ անգամ չէ, որ հետաձգվել է: 2008-ին Պովետկինը ոտքի վնասվածք էր ստացել ու չկարողացավ ռինգ դուրս գալ: 2010-ին էլ ռուսաստանցի բռնցքամարտիկի մոտ կրկին առողջական խնդիրներ էին ծագել:**

**«Շատ ուրախ եմ, որ մենամարտի անցկացման հարցում վերջապես վերջակետ դրվեց: Բռնցքամարտի սիրահարներն անհամբերությամբ են սպասում օլիմպիական 2 չեմպիոնների մենամարտին: Այդ մենամարտը գերծանրքաշային կարգում անցկացված մենամարտերից լավագույնը կլինի: Հաճելի է, որ հանդիպումը կայանալու է Մոսկվայում: Այն հնարավորություն կտա ռուսաստանցի եւ ուկրաինացի մարզասերներին ներկա գտնվելու այդ հետաքրքրական մենամարտին», նշել է Վլադիմիր Կլիչկոն:**

## «Ուլիսի» պաշտպանները համալրեցին «Ալաշկերտը»

**Ինչպես տեղեկացրել ենք, ֆինանսական դժվարությունների հետեւանքով «Ուլիսը» հրաժարվել է իր փորձառու ֆուտբոլիստներից՝ առաջարկելով ազատ խաղացողի կարգավիճակով այլ թիմեր տեղափոխվել: Նրանցից երկուսը՝ կենտրոնական պաշտպաններ Տիգրան Հախնազարյանն ու Միխեիլ Սիմոնյանը պայմանագիր են կնքել բարձրագույն խմբի առաջնության նորեկ Մարտունու «Ալաշկերտի» հետ: Վերջինս ուսումնամարզական հավաք է անցկացնում Հանքավանում: Ավելի վաղ «Ալաշկերտի» շարքերը համալրել էին Սարգիս Նասիբյանը, Արամ Հովսեփյանն ու դարպասապահ Էդուարդ Հովհաննիսյանը: Թիմին են միացել ռուս կիսապաշտպան Ալեքսանդր Օբիդինը եւ բուլղարացի հարձակվող Վիկտոր Շիշկովը, որոնք փորձաշրջան կանցնեն:**

## Մեսիի թիմը հաղթեց Նեյմարի թիմին

Պերուի մայրաքաղաք Լիմայում ֆուտբոլի բարեգործական հանդիպում են անցկացրել «Մեսիի ընկերներ» եւ «Նեյմար եւ աշխարհի մնացած աստղեր» թիմերը: Մեսիի թիմակիցները խաղը շահել են 8-5 հաշվով: Թիմի մարզիչը ՌԴ հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելլոն էր: Բրազիլացիների մարզիչը Զիկոն էր:

Հետաքրքրական է, որ խաղի ընթացքում ֆուտբոլիստները փոխել են թիմերը, իսկ «Բարսելոնի» բրազիլացի պաշտպան Դանիել Ալվեսը գոլի հեղինակ է դարձել 2 թիմերում էլ: Մեսին ու Նեյմարն իրենց օգտին 2-ական գոլ են գրանցել:

## Ուլրիխը խոստովանել է, որ դոպինգ է ընդունել

«Տուր դը Ֆրանս» բազմօրյա հեծանվավազքի 1997-ի մրցաշարի հաղթող Յան Ուլրիխը խոստովանել է, որ մրցումների ժամանակ իրեն եւս արյան փոխներարկում են կատարել:

«Այն ժամանակ հեծանվորդներից յուրաքանչյուրն արգելված դեղամիջոցներ էր օգտագործում: Ես եւս դրանք օգտագործում էի ոչ թե մրցակիցների նկատմամբ առավելություն ստանալու, այլ հավասար պայմաններում մրցելու համար», նշել է գերմանացի հեծանվորդը:

Ժամանակին Ուլրիխը դոպինգի օգտագործման մեջ մեղադրված Լենս Արմսթրոնգի գլխավոր մրցակիցներից մեկն էր: 1997-ին նա հաղթող ճանաչվեց «Վուելտայում»:

### ԸՄԲՇԱՄԱՐՏ

## Կարապետ Չալյանը նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը

**Սկոպիեում մեկնարկած հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնության առաջին օրը հաջող էր Հայաստանի հավաքականի համար: Մինչեւ 74 կգ քաշայինների մրցավեճում Կարապետ Չալյանը հաղթելով շվեդ, բուլղարացի, լատվիացի եւ մոլդովացի ըմբիշներին, մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում էլ հայ ըմբիշն իրեն հիանալի դրսեւորեց ու հաղթելով ռուսաստանցի Ադլան Ակիեւին, հռչակվեց Եվրոպայի երիտասարդների չեմպիոն:**

**Հայաստանցի մեկ այլ ըմբիշ՝ մինչեւ 50 կգ քաշային Մակիչ Սիմոնյանը հասավ մինչեւ քառորդ եզրափակիչ, որտեղ պարտվելով թուրք մրցակցին, գրավեց 9-րդ տեղը: Նույնպիսի արդյունքով առաջնությունն ավարտեց 1/8 եզրափակիչում պայքարից դուրս մնացած Գոռ Սիրեկանյանը: 1/8 եզրափակիչի արգելքը չհաջողվեց հաղթահարել նաեւ 96 կգ քաշային Կարեն Աբգարյանին, որը գրավեց 13-րդ տեղը:**

## Նշան Մունչյանին արժանին մատուցվեց



**Լոս Անջելեսում տեղի է ունեցել ԽՍՀՄ բազմակի չեմպիոն, Եվրոպայի չեմպիոն, անկախ Հայաստանի պատմության մեջ բռնցքամարտի աշխարհի առաջին չեմպիոն, գերթեթեւքաշային բռնցքամարտիկ Նշան Մունչյանի ծննդյան 50-ամյակին նվիրված հանդիսավոր արարողություն: Մարզական մեկնաբան Վարդան Թադեւոսյանը ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Յուրի Վարդանյանի անունից ջերմորեն շնորհավորել է հոբելյարին եւ նրան է հանձնել նախարարության ոսկե մեդալը: Անվանի բռնցքամարտիկը պարգեւատրվել է նաեւ ՀԱՕԿ-ի եւ Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի ոսկե մեդալներով:**

**Նշան Մունչյանը 2007-ից բնակվում է ԱՄՆ-ում: Նա ներկայումս Լոս Անջելեսի «International Sports Union» մարզական ակումբի բռնցքամարտի գլխավոր մարզիչն է: Նշան Մունչյանին հոբելյանի առթիվ հաճելի նվեր մատուցեց նրա ամերիկյան սաներից Ֆերդինանդ Քերոբյանը՝ նվաճելով ԱՄՆ-ի պատանիների չեմպիոնի տիտղոսը:**

## «Բեշիքթաշը» հետաքրքրվում է Օզբիլիսով

**Թուրքական «Բեշիքթաշը» միացել է այն ակումբներին, որոնք ցանկանում են իրենց կազմում ընդգրկել ՀՀ հավաքականի եւ Կրասնոդարի «Կուբանի» կիսապաշտպան Արաս Օզբիլիսին:**

**Ըստ Fanatik.com-ի, թուրքական ակումբը պատրաստ է Օզբիլիսի համար 5 մլն եվրո առաջարկել «Կուբանին», իսկ ֆուտբոլիստին վճարել տարեկան 1,5 մլն եվրո աշխատավարձ: Հայտնվում է, որ կողմերն արդեն համաձայնության են եկել տրանսֆերի հարցում եւ առաջիկայում «Բեշիքթաշը» պաշտոնապես կհայտարարի գործարքի կայացման մասին: Օզբիլիսով հետաքրքրված է «Բեշիքթաշի» նոր գլխավոր մարզիչ Սլավեն Բիլիչը, որը Մոսկվայի «Լոկոմոտիվից» է տեղափոխվել Ստամբուլ:**

**Նշենք, որ Օզբիլիսով հետաքրքրվում են նաեւ Մոսկվայի «Լոկոմոտիվը», «Դինամոն» ու «Սպարտակը», Կազանի «Ռուբինն» ու Մախաչկալայի «Անժին», որոնք ավելի լավ պայմաններ են առաջարկում ֆուտբոլիստին:**

## Սուսերամարտիկների հարուստ ավարը

**Բաթումում անցկացված սուսերամարտի պատանեկան միջազգային մրցաշարում հաջող ելույթներ ունեցան հայ սուսերամարտիկները, որոնք նվաճեցին 6 մեդալ:**

**Արծաթե մեդալներ նվաճեցին Նորագավիթի սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոցի սան, խոցասուսերակիր Էդուարդ Հովիկյանը, «Քեթրին» ակումբը ներկայացնող խոցասուսերակրուհի Էմմա Պողոսովան եւ Երեւանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոցի սուսերամարտի խմբի սան, ճկասուսերակիր Մայքլ Հովհաննիսյանը:**

**Բրոնզե մեդալների արժանացան ճկասուսերակիրներ Էմիլ Դանիելյանը, Պարգեւ Ստեփանյանը եւ Արփինե Աթոյանը:**

## Նորայր Ասլանյանը տեղափոխվեց «Վիլհելմ II»

**Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Նորայր Ասլանյանը երկու տարվա պայմանագիր է կնքել Հոլանդիայի առաջնության առաջին խմբում հանդես եկող «Վիլհելմ II» թիմի հետ: Վերջինս Հոլանդիայի առաջնությունում դուրս մնաց բարձրագույն խմբից: Ասլանյանը մինչ այդ խաղում էր 1-ին խմբի առաջնության մասնակից «Էմմենում», որտեղից հեռացել է ազատ ֆուտբոլիստի կարգավիճակով:**

**«Նորայրը զգալիորեն կուժեղացնի մեր թիմի հարձակման գիծը: Նա բազմակողմանիորեն զարգացած ֆուտբոլիստ է, որը կարող է խաղալ հարձակման եւ կիսապաշտպանության տարբեր դիրքերում: Ասլանյանն ունի բարձր արագություն եւ գոլային հոտառություն», նշել է «Վիլհելմ II-ի» մարզիչ Յուրգեն Ստրեպելը:**

## Գրիգորյանն առաջին հաղթանակը տոնեց

**Աբու Դաբիում ընթացող շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Ավետիք Գրիգորյանը հաղթեց Աիմեդ Աիմեդին ու վաստակած 2 միավորով բարձրացավ 20-րդ հորիզոնական: Լիլիթ Գալոյանը ոչ-ոքի խաղաց Մոհամեդ Տիսիրի հետ: Նա 1,5 միավորով 28-րդ տեղում է: 2,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են 6 շախմատիստներ:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Ադրբեջանը պատրաստվում է նախագահական ընտրություններին

### *Թուրքիայում ուշադիր հետեւում են առաջադրվող թեկնածուներին*

Առաջիկա հոկտեմբերին Ադրբեջանում նախագահական ընտրություններն են: Հուլիսի 2-ին Բաքվում Ժողովրդավարական ուժերի ազգային խորհուրդը ընդդիմության միասնական թեկնածու է առաջադրել վտարանդի Ռուստամ Իբրահիմբեկովին: Եթե Ադրբեջան վերադառնալու դեպքում իրավապահ մարմինները չձերբակալեն նրան, ապա նա կմասնակցի ընտրություններին:

Մինչ այդ, գործող նախագահ Իլհամ Ալիեւին թեկնածու առաջադրած իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցությունից հետո, «Ժողովրդավարական Ադրբեջանի երկիր» կուսակցությունը հունիսի վերջերին թեկնածու էր առաջադրել Ադրբեջանի նախագահի տիկնոջը՝ Մեհրիբան Ալիեւային: Հունիսի 25-ին «Ազգ»-ում Ալիեւայի առաջադրմանը հակիրճ, բայց բովանդակալից հոդվածով անդրադարձել էր Վահրամ Աթանեսյանը: Հունիսի 28-ին այդ հարցն արծարծել է «Դունյա բյուլտենի» լրատվական գործակալությունը:

Թերեւս կարիք չէր լինի վերարծարծելու հարցը, եթե այս գործակալությունը չլիներ թուրքական, նաեւ իշխանամետ եւ Ալիեւի առաջադրմանը չմոտենար Ադրբեջանում իշխող Ալիեւների կլանի մասնատման տեսանկյունից: Ի դեպ, «Դունյա բյուլտենին» հարցին նվիրված հոդվածը հրապարակել է հենց «Ալիեւայի թեկնածությունը կարող է մասնատել իշխանության ղեկին կանգնած ընտանիքին» վերնագրով:

Նախքան հոդվածի բովանդակությունը ներկայացնելը ասենք, որ Ադրբեջանի նախագահական ընտրությունները սկզբունքորեն չպետք է հետաքրքրեն մեզ, որովհետեւ ինչպիսին էլ լինեն դրանց արդյունքները, միեւնույն հայատյացն է բազմելու նախագահի աթոռին: Հետաքրքրականը թերեւս թուրքական գործակալության հոդվածն է, որն արտահայտում է Ալիեւայի առաջադրման, Ալիեւների ընտանիքի եւ առհասարակ Ադրբեջանի նախագահական ընտրությունների նկատմամբ վարչապետ Էրդողանի կառավարության վերաբերմունքը:

Դա առանձնապես դրական չէ: Ոչ էլ եղել է: Այլապես 1995-ի մարտին Թուրքիան պետական հեղաշրջում չէր կազմակերպի Հեյդար Ալիեւի դեմ: Ի դեպ, չնայած հեղաշրջման թուրքական փորձին, որը կանխվել է վերջին պահին միայն, եւ Թուրքիայի անվերապահ աջակցությանը մուսավաթականներին, «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը առաջ էր քաշել Հեյդար Ալիեւը:

Ինչ խոսք, նրա խնդիրը թուրքական դավադրությունը հանդուրժելը չէր, այլ հայատյացությունը, որն ընդհանուր է թե՛ Ադրբեջանի, թե՛ Թուրքիայի համար: Ոչ էլ Թուրքիան Ադրբեջանի խնդիր ունի: Եթե նա Լեռնային Ղարաբաղի հիմնահարցում անվերապահ աջակցում է Ադրբեջանին, ապա դա անում է հիմնահարցը որպես ներքին խնդիր դիտելու, առավել եւս՝ Հայաստանի զարգացումը կանխարգելելու եւ հայկական պետությունը կազմալուծելու նկրտումներից չհրաժարվելու համար:

Ըստ ամենայնի, ադրբեջանական կողմը ճանաչում է թուրքերին, որ համառորեն չի վերացնում վիզային ռեժիմը Թուրքիայի քաղաքացիների նկատմամբ եւ նախընտրում է մերժել Անկարայի պահանջները՝ փոխանակ համարժեք քայլով արձագանքելու: Այսինքն՝ տարաձայնությունները «Մեկ ազգի երկու պետության» միջեւ ակնհայտ են:

Այդ տարաձայնությունների մասին էլ գիտեն անկախ էթնիկ ծագումից հայի ազգանունով Հայաստանում թուրք-ադրբեջանական քարոզչություն ծավալող հայատյաց տականքները: Սակայն ղարաբաղյան պատերազմի հաղթանակը նսեմացնելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անհեռանկարության պատրանք ստեղծելու, ինչպես նաեւ պատվիրատու միջազգային կազմակերպությունների աչքին սիրունատես երեւալու համար սրանք առիթ բաց չեն թողնում թմբկահարելու Թուրքիա-Ադրբեջան անքակտելի միասնության մասին, որ հոգեբանական ճնշման ենթարկեն հայ հասարակությանը:

Համենայն դեպս, «Դունյա բյուլտենին» Մեհրիբան Ալիեւայի առաջադրումը նախագահի թեկնածու համարում է կարեւոր զարգացում առաջիկա ընտրությունների տեսանկյունից, ապա շարունակում է.

«Ինչպես հայտնի է, իշխող կուսակցությունը արտակարգ նիստ էր գումարել եւ Իլհամ Ալիեւին առաջադրել էր նախագահի թեկնածու այն պահին, երբ ընդդիմությունը միացյալ թեկնածուի հարցն էր քննարկում: Սակայն «Ենի Ազերբայջան» կուսակցության այս արտակարգ համագումարը պատճառ էր դարձել, որ վերհիշվեն Իլհամի հոր՝ Հեյդար Ալիեւի իշխանության վերջին տարիների քաղաքական զարգացումները: Թեեւ Հեյդար Ալիեւի օրոք Իլհամ Ալիեւը անընդմեջ հայտարարում էր, թե նախագահ դառնալու մտադրություն չունի, այդուհանդերձ, վարչապետ էր նշանակվել, ընդլայնվել էին վարչապետի լիազորությունները եւ Ադրբեջանի անկախացումից ի վեր առաջին անգամ ազդեցիկ դիրք էր գրավել երկրի վարչապետը: Հեյդար Ալիեւի մահից հետո նախագահի պաշտոնին նրա որդու՝ Իլհամ Ալիեւի գալը տարակուսանք էր առաջացրել:

Ուշագրավ է, որ պաշտոնավարման երկրորդ ժամկետն ավարտող Իլհամ Ալիեւը վերընտրվելու մտադրության մասին որեւէ հայտարարություն չի անում: Ավելին, նա «Ենի Ազերբայջան» կուսակցության վերջին համագումարի ելույթում նախընտրել էր չարծարծել իր թեկնածության հարցը: Սակայն Իլհամ Ալիեւի առաջադրումից հետո համագումարը Մեհրիբան Ալիեւային ընտրեց կուսակցության փոխնախագահ: Չնայած վերջին տարիներին շարունակ տարածվող խոսակցություններին ու մեկնաբանություններին, թե Իլհամ Ալիեւը պատրաստվում է իր տիկնոջ՝ Մեհրիբան Ալիեւայի ընտրությունը նախագահի պաշտոնում, իշխանության թեւն առ այսօր լռություն է պահպանում:

Հեյդար Ալիեւի օրոք Մեհրիբան Ալիեւան առանձնապես աչքի չէր ընկնում: Սակայն նախագահի պաշտոնում Իլհամ Ալիեւի հայտնվելուց հետո իրավիճակը փոխվել եւ Մեհրիբան Ալիեւան դարձել էր իշխանության ամենաազդեցիկ դեմքը: Ոչ միայն ինքը, այլեւ իր ընտանիքի անդամներն էլ սկսել էին կարեւոր դիրքեր զբաղեցնել իշխանության մեջ: Հեյդար Ալիեւի եղբոր՝ Ջելալի հեռացումը իշխանության շարքերից, նաեւ հին նախարարների պաշտոնազրկումը պայմանավորվում է Մեհրիբան Ալիեւայի անվամբ»:

Այնուհետեւ թուրքական գործակալությունն ավելացնում է, որ հին գործիչները դեմ են Մեհրիբան Ալիեւայի առաջադրմանը, ոմանք նույնիսկ դա սադրանք են համարում, ոմանք էլ Ադրբեջանի առաջին տիկնոջ թեկնածությունը վերագրում են իշխանությունը մասնատելու ջանքերին՝ մեղադրելով այդ ջանքերի համար Մոսկվային:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Հայաստան-Լիբանան տնտեսական կապեր

Բեյրութ-Երեւան ուղիղ ավիաչվերթի բացման առիթով Հայաստան է ժամանելու լիբանանյան պաշտոնական ու գործարար շրջանակների մեծ ու ներկայացուցչական պատվիրակություն: Հուլիսի 6-ին, ժամը 12-ին ողջ պատվիրակությունը հյուրընկալվելու է ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատում (Խանջյան 11), ուր երկու երկրների առեւտրաարդյունաբերական պալատների նախագահներ Մարտին Սարգսյանը եւ Մոհամմադ Չոքերը ստորագրելու են համագործակցության համաձայնագիր, որին հաջորդելու է մամուլի ասուլիսը: Պատվիրակության կազմում են լիբանանյան MEA ավիաընկերության գլխավոր տնօրեն Մոհամեդ ալ Հութին, Լիբանանի արդյունաբերության նախարար, մեր հայրենակից Վրեժ Սաբունջյանը, հայազգի նախկին նախարարներ եւ խորհրդարանի ներկայիս պատգամավորներ, Լիբանանի Կենտրոնական բանկի փոխնախագահ Հարություն Սամուելյանը, Լիբանանի բանկերի ասոցիացիայի նախագահը, Լիբանանի արդյունաբերողների ասոցիացիայի նախագահը, բարձրաստիճան այլ պաշտոնատար այրեր, երկու երկրների դեսպանները, ընկերությունների ղեկավարներ, գործարարներ: Այցը բացառիկ կարեւոր է եւ լուրջ ազդեցություն կունենա հայ-լիբանանյան տնտեսական կապերի զարգացման գործում:

ՎՐԵԺ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի լրատվական ծառայության ղեկավար

237-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

# Ամերիկայի Միացյալ Նահանգները նշում է Անկախության օրը

**Հուլիսի 2-ին Երեւանում ԱՄՆ դեսպանատունը նշեց Միացյալ Նահանգների անկախության 237-րդ տարեդարձը: ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը եւ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը բարձր գնահատեցին հայ-ամերիկյան սերտ գործընկերությունը:**

**Իր ողջույնի խոսքում դեսպան Հեֆերնը նշեց, որ տարին նշանավորվում է «հայ-ամերիկյան ամուր կապերի պահպանմամբ»: «Բարձր մակարդակում կանոնավոր կերպով ապահովվել է քաղաքական եւ դիվանագիտական երկխոսությունը»,- ասաց դեսպան Հեֆերնը, ապա նշեց, որ պետքարտուղար Քերրին անցյալ ամիս Վաշինգտոնում ընդունել է արտգործնախարար Նալբանդյանին ու գոհ է մնացել նրա հետ ունեցած բովանդակալի հանդիպումից: Դեսպանը նաեւ հավելեց. «Մեր հիմնական գերակայությունը տնտեսական կապերի խորացումն է առեւտրի ու ներդրումների ծավալների մեծացման ու գործարար միջավայրի բարելավման միջոցով: Մենք աշխատում ենք, մեր ժողովուրդների միջեւ առկա կապերի վրա հիմնվելով, ձեւավորել փոխշահավետ տնտեսական հնարավորություններ»: Նա ողջունեց ԱՄՆ դեսպանության հետ աշխատող տարբեր կազմակերպություններին, անհատներին, խմբերին ու քաջալերեց, որ նրանք աշխատեն նաեւ միմյանց հետ:**

**Միջոցառման ժամանակ Երեւանում ԱՄՆ դեսպանատանն առաջին անգամ ներկայացվեց ամերիկյան քանթրի երաժշտություն: Հայկական «Իմեջին բենդը» ամբողջ երեկոյի ընթացքում հնչեցրեց տարբեր երգեր՝ ամերիկյան քանթրի ոճով, իսկ «Նանե» պարային ստուդիան ներկայացրեց քանթրի խմբապար:**

**Անկախության օրը նշանավորում է Միացյալ Նահանգների ծննդյան օրը եւ Անկախության հռչակագրի ընդունումը, որ տեղի ունեցավ 1776թ. հուլիսի 4-ին:**

# Orange Հիմնադրամի աջակցությամբ Տավուշի մարզի Բերդավան գյուղում ներդրվում է գյուղատնտեսական նոր նախագիծ



**Orange Հիմնադրամի եւ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության միացյալ ջանքերով Տավուշի մարզի Բերդավան գյուղում մեկնարկում է նոր գյուղատնտեսական նախագիծ: Նախագիծն օգտագործում է սպառողական կոոպերատիվի մոդելը եւ թույլ է տալու գյուղի ավելի քան 40 ընտանիքներին միավորել իրենց աշխատանքը՝ ստանալու ավելի լավ արդյունքներ:**

**Գյուղում ստեղծված «Բերդավան» պտղաբուծական կոոպերատիվին աջակցելու նպատակով Orange Հիմնադրամը նվիրաբերել է գյուղատնտեսական տեխնիկա, մասնավորապես տրակտոր, հնձիչ կոմբայն, միջատասպան նյութերի սրսկիչներ: Բնակիչների համար կազմակերպվել են մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաեւ կապեր են ստեղծվել վերամշակող ընկերությունների հետ, ներդրված նոր մոդելի՝ սպառողական կոոպերատիվի գործունեությունը եւ բերքի իրացումը հեշտացնելու նպատակով: Կբարելավվի նաեւ ջրամատակարարման համակարգը: Ըստ հաշվարկների՝ Բերդավանի բնակիչները, ովքեր ավանդաբար մասնագիտացած են դեղձի մշակման մեջ, այս նվիրատվության եւ գյուղատնտեսական նոր մոդելի կիրառման շնորհիվ արդեն հաջորդ տարի բերքատվությունը կբարձրացնեն 2 եւ ավելի անգամ:**

**«Հայաստանի գյուղերի խնդիրները, հատկապես այն գյուղերինը, որոնք երկրի սահմաններին են, Orange Հիմնադրամի ուշադրության կենտրոնում են: Մինչ օրս մենք մասնակցել ենք գյուղերում մանկապարտեզների, մարզասրահների, համակարգչային սրահների վերազինմանն ու կահավորմանը, սակայն առաջին անգամն է, երբ ներգրավվում ենք նման գյուղատնտեսական նախաձեռնության իրականացման մեջ: Իսկապես ցանկանում ենք շուտով տեսնել այն արդյունքներն ու փոփոխությունները, որ մեր ներդրումը պիտի բերի այս գյուղին: Երջանիկ ենք այսօր նշել գյուղի համար այս նոր մեկնարկը», ասաց Orange Հիմնադրամի խորհրդի նախագահ Ֆրանսիս Ժելիբտերը:**

**«Այս ծրագիրը մեր մեծ նախաձեռնության սկիզբն է՝ ուղղված հեռավոր եւ անապահով համայնքներում բարձրարժեք գյուղատնտեսության խթանմանը, ինչը, վստահ ենք, կբերի մարդկանց եկամուտների ավելացմանը եւ արտագաղթի կրճատմանը», ասաց «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության վարչության նախագահ Հայկ Մինասյանը:**

**Նախագծի իրականացման համար Orange Հիմնադրամը տրամադրել է 12.921.000 դրամ:**

Սրբագրում եւ խմբագրում
ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի
E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 3.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: